ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐԱՄ ՄԻՐԶՈՅԱՆ

Ինչպես հայտնի է, հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է ապրել և մի անգամ չէ, որ ընկել է օտարի լծի տակ: Դրանցից ամենաահավորն եղել է թուրքականը, որը սպառնում էր լիովին ոչնչացնել Օսմանյան կայսրությունում ապրող հայությանը, իսկ հետագայում նաև արևելահայությանը:

Հայտնի է նաև, որ այդ խնդիրն իրագործելու համար երիտթուրքերի համար հարմար առիթ և արտաքին նպաստավոր պայմաններ հանդիսացան 1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմը և այն փաստը, որ այդ ժամանակ Թուրքիան դաշնակցել էր կայսերական Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պես հզոր երկրների հետ: Վերը նշված հանգամանքները թույլ տվեցին երիտթուրքական ղեկավարներին գործի դնել մարդկության պատմության ընթացքում նախադեպը չունեցող մի ծրագիր. ամփոփ մի ժողովրդի ծրագրավորված ոչնչացում:

Հայերի զանգվածային ոչնչացման մեջ առավել շոշափելի էր հենց կայսերական Գերմանիայի դերակատարումը: Նպատակ դնելով դառնալ աշխարհակալ տերություն՝ Գերմանիան մեծ պլաններ ուներ՝ կապված Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի հետ: Հենց այդ ենթատեքստում էր, որ նա սկսեց ակտիվ մասնակցություն ունենալ Արևելյան հարցի և նրա անբաժան մասը կազմող Հայկական հարցի խնդրում: Նման քայլերով կայսերական Գերմանիան ցանկանում էր նպաստել Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում իր քաղաքական, տնտեսական և ռազմական խնդիրների լուծմանը:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության հետ կապված շատ այլ հարցերի, ցայսօր Մեծ եղեռնում կայսերական Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ դեռևս առկա են բազմաթիվ չլուսաբանված հարցեր: Սակայն պետք է փաստել, որ խնդրո առարկայի վերաբերյալ արդեն հավաքվել է բավականաչափ նյութ ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա պատմագրության մեջ: Եվ, թերևս, ժամանակն է փորձ կատարել՝ կրկին անդրադառնալու մինչ այսօր պատմագրության մեջ Հայոց ցեղասպանությունում կայսերական

Գերմանիայի մեղսակցության հարցի բազմակողմանի քննարկման խնդրին:

Ներկա հոդվածում աշխատելու ենք առաջին մոտեցմամբ ներկայացնել, թե ինչպե՞ս է վերը նշված հարցն արծարծվել խորհրդահայ պատմագրության մեջ:

Թեմային վերաբերվող աշխատություններից առաջինը, թերևս, պետք է հիշատակել 1948թ. լույս տեսած Ար. Մնացականյանի «Գերմանա-թյուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում» գիրքը:[1] Եթե հաշվի առնենք այն փաստը, որ անցած դարի 20-50-ական թվականներին, ելնելով գաղափարական նկատառումներից, Հայոց ցեղասպանության թեման խորհրդահայ իրականության մեջ արգելքի տակ էր, ապա պետք է փաստել, որ հեղինակի կատարած աշխատանքը նշանակալից երևույթ էր, քանի որ սույն գրքում, թեկուզ և հպանցիկ, բայց անդրադարձ է կատարվում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացված Հայոց ցեղասպանության թեմային: Հայոց ցեղասպանության մեջ կայսերական Գերմանիայի մեղսակցության հարցին հեղինակն անդրադառնում է առաջին, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գլուխներում: Մասնավորապես՝ առաջին գլխում («Կովկասը գերմանա-թյուրքական իմպերիալիստների զավթողական պլաններում», էջ 28-49) խոսվում է կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արևելյան բաժնի ղեկավար դոկտոր Ռոհրբախի՝ Կովկասը և Մերձավոր Արևելքը գերմանական գաղութ դարձնելու մտադրության մասին, որն իր պաշտոնական ելույթներում բազմիցս նշել է Կովկասը, Թուրքահայաստանը և Իրանը Գերմանիայի ազդեցության ոլորտ մտցնելու անհրաժեշտության մասին: Նա մի նախագիծ էր մշակել, ըստ որի Հայաստանը պետք է անջատվեր Ռուսաստանից և դառնար Գերմանիայի գաղութ, քանզի, ըստ Ռոհրբախի. «...Հայաստանն իր աշխարհագրական դիրքով ...հանդիսանում է այն դիրքի բանալին, որը տիրապետում է Անատոլիայի վրա»:[2] Հեղինակը նշում է, որ Գերմանիայի արտաքին քաղաքականության Արևելյան ուղղությունը հատկապես աշխուժացավ Վիլհելմ 2-րդի՝ 1898թ. տարածաշրջան կատարած այցից հետո և որ Գերմանիայի՝ Արևելքում իրագործվող ծավալատիրական քաղաքականության արտահայտություններից մեկը Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման նախագիծն էր:

Խնդրո առարկայի վերաբերյալ նույն գլխում անդրադարձ է արվում թուրքական բանակի վրա Գերմանիայի ազդեցության տարածման, մասնավորապես, գերմանական ռազմական տեսուչների և առաքելությունների հարցերին: Նշվում է, որ պատերազմի նախօրյակին թուրքական և գերմանական ռազմագետներն անհանգստացած էին Կովկասի հայերի խիստ բացասական վերաբերմունքից իրենց հանդեպ, և այդ հարցը ներքին ակտիվ քննարկումների առարկա էր դառնում: Այդ առիթով Կովկասյան շտաբում ստացված մի զեկուցագրում հաղորդվում էր, որ թուրքական կառավարության ճնշող մեծամասնությունը համոզված էր, որ պետք էր շարունակել դաժանագույն միջոցների կիրառումը հայերի նկատմամբ:[3]

Հինգերորդ գլխում («Գերմանա-թյուրքական գործակալության Թիֆլիսի կենտրոնը», էջ 102-137) հեղինակը ներկայացնելով թուրքական բանակում Լիման ֆոն Սանդերսի գլխավորած գերմանական ռազմական միսիայի անդամների զբաղեցրած պաշտոնները նշում է, որ 1914թ. հունվար-փետրվար ամիսներին նրանք իրենց ձեռքը վերցրին թուրքական բա-

նակի դեկը: Նշվում է նաև, որ Լիման ֆոն Սանդերսը և Էնվեր փաշան բոլոր հայ սպաներին ու զինվորներին հեռացրեցին թուրքական բանակից՝ հետագայում կոտորելու համար:[4]

Վեցերորդ գլխում («Գերմանա-թյուրքական գործակալության Էրզրումի կենտրոնը», էջ 137-179) խոսվում է 1913թ. սեպտեմբերին Էրզրումում գերմանական հյուպատոսության բացման մասին, որի առաջնահերթ նպատակներից էր հայերի մեջ ռուսամետ տրամադրությունների արմատախիլ անելը և նրանց Ռուսաստանից վանելը: Նորաբաց հյուպատոսության դեկավար նշանակվեց գերմանական հետախույզ սպա Էդգար Անդերսը:[5] Նշվում է, որ հայերին արտաքսելու և բնաջնջելու գործում գերմանացիները թուրքերին իրենց օգնությունն էին խոստացել: Դրա հետևանքով Կովկասի մուսուլմանները պետք է միավորվեին Օսմանյան կայսրության մուսուլմանների հետ: Այդ մասին գրում էր վերը նշված դոկտոր Ռոհրբախը և մատնանշում այն ուղին, որով կարելի կլիներ հասնել դրան. «Քանի որ Հայաստանը արգելք է հանդիսանում այդ պլանի իրականացմանը, հարկավոր է փոփոխել այդ շրջանի բնակչությունը, տեղական հայ բնակիչներին արտաքսելով հեռու: Միջագետքը, որտեղով անցնում է Բաղդադի երկաթուղին, բնակչությամբ շատ նոսր է: Այդ դրությունը վնասակար ազդեցություն է ունենում երկաթուղու տնտեսական զարգացման վրա և այդ պատճառով էլ լիովին հասկանալի է, որ պետք է օգնել Գերմանիային այդ դժբախտության մեջ: Այդ նպատակով հերիք է, որ Հայաստանից հայերը հանվեն և ուղարկվեն այնտեղ, իսկ նրանց տեղը՝ օսմանյան կառավարությանը թույլ տա, որ մուսուլմաններ վերաբնակեցնի... Եթե այդպես կատարվի, Հայաստանը մի հարվածով կպոկվի Ռուսաստանից»:[6] Մնացականյանի խոսքերով, Գերմանիան միանգամից երկու նպատակ էր իրականացնում. թուրքերի հետ միասին և նրանց ձեռքերով բնաջնջում էր ռուսամետ կողմնորոշում ունեցող հայերին և իրագործում իր զավթողական պլանները:

Էրզրումի գերմանական հյուպատոս Անդերսն արևմտահայերի շրջանում ակտիվ հակառուսական կամպանիա էր վարում, ինչպես նաև գովաբանում՝ հայերին Բաղդադի երկաթուղու երկայնքով վերաբնակեցնելու ծրագիրը՝ խոստանալով գերմանական կառավարության օգնությունը և աջակցությունը:[7]

Յոթերորդ գլխում («Հայերի բնաջնջման նախապատրաստումը և իմպերիալիզմի գործակալները», էջ 179-194) հեղինակն անդրադառնալով այդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականությանը, վերջում, կրկին խոսելով Գերմանիայի մասին, իբրև եզրակացություն նշում է. «Միայն ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և գերմանական իմպերիալիստների հանցագործ քաղաքականությունը պայմաններ ստեղծեց թյուրքական բարբարոսների համար, որպեսզի նրանք նախապատրաստեին և անցնեին հայ ժողովրդի մի հսկայական մասի գազանային բնաջնջմանը, իսկ մյուս մասին արտաքսեին իրենց հայրենի տնից ու տեղից...»:[8]

Պետք է նշել, որ որպես անդրադարձ Հայոց ցեղասպանության և ներկա հոդվածի խնդրո առարկա թեմային՝ Մնացականյանի գիրքը իր ժամանակի համար նշանակալից երևույթ էր:

Նշված թեմային անդրադարձներ կան նաև Մ. Ներսիսյանի՝ 1955թ. լույս տեսած «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական

բռնապետության դեմ (1850-1870թթ.)» աշխատասիրության մեջ:[9] Ի թիվս այլ հիմնահարցերի Ներսիսյանն անդրադարձել է նաև հայ ազատագրական շարժման հանդեպ արևմտյան պետությունների բացասական դիրքորոշման հարցին: Հեղինակի կողմից չի շրջանցվել նաև Հայոց ցեղասպանության և դրանում մեծ տերությունների մեղսակցության հարցերը. «Նույն արևմտյան պետությունների «չեզոքության» և հովանավորող քաղաքականության պայմաններում թյուրքական ջարդարարները կազմակերպեցին հայ բնակչության մասսայական կոտորածներ 1909 թվականին Ադանայում և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ Արևմտյան Հայաստանում ու Թյուրքիայում: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, Իթթիհատի դահիճները սրի քաշեցին մեկ միլիոն մարդ: Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի այս մասսայական ջարդերի համար քիչ հանցանք չունեն նշված պետությունները, որոնք, ...հանդես եկան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ»:[10]

1960-ական թվականներին, հատկապես 1965-ին, երբ լրացավ Հայոց ցեղասպանության հիսունամյակը, խախտվեց լռությունը, որին մատնված էր այս հարցը: Դա իր արտացոլումը գտավ նաև պատմագրության մեջ. խորհրդահայ պատմաբանները մենագրություններ և փաստաթղթերի ժողովածուներ հրատարակեցին, որոնք հիմք դարձան այդ ոլորտում հետագա ուսումնասիրությունների համար:

Խորհրդահայ պատմագրության մեջ Հայոց ցեղասպանությանը նվիրված ուսումնասիրությունների նոր փուլի առաջնեկներից էր Եր. Սարգսյանի «Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны» աշխատասիրությունը և դրա լրացված ու բարեփոխված հայերեն հրատարակությունը:[11]

Իր մենագրության 3-րդ գլխում («Օսմանյան կայսրության մուտքը պատերազմի մեջ», էջ 128-174) հեղինակը հակիրճ ներկայացնում է գերմանական ռազմական առաքելությունների աշխատանքը Թուրքիայում: Անդրադառնալով Գերմանիայի առաջնային նպատակներին՝ Սարգսյանը նշում է, որ Գերմանիան աշխատում էր իր ազդեցությունն ուժեղացնել ասիական Թուրքիայում, հատկապես՝ Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում: Այդ նպատակին հասնելու համար Գերմանիան իր ազդեցությունն էր տարածում տեղի հայ և քուրդ ազգաբնակչության վրա և ծավալում հակառուսական քարոզչություն: Նույն խնդրով զբաղված էր «Գերմանա-ասիական ընկերությունը», որի նախագահն էր ֆոն դեր Գոլցը:[12] Այդ ընկերությունում մեծ դերակատարում ուներ արդեն հիշատակված պրոֆեսոր Պաուլ Ռոհրբախը, որի դիրքորոշումը ներկայացնում է Սարգսյանը. Ռոհրբախը գտնում էր, որ ձեռնտու չէ դեպքերի զարգացումը հասցնել Հայաստանում մինչև բացահայտ ապստամբության, որն անխուսափելի կհանգեցներ Գերմանիայի համար խիստ աննպաստ ռուսական միջամտությանը: Միաժամանակ նա նշում էր, որ տարածաշրջանը խաղաղեցնելը չափազանց դժվար գործ է և հազիվ թե օգտավետ լինի Թուրքիայի համար: Տարածաշրջանի երկու ժողովուրդների՝ քրդերի և հայերի հաշտեցումը անհնարին է և տիրող անօրենության պայմաններում ուժեղի իրավունքն է գերակշռող: Քանի որ քրդերը ուժեղ են, ուստի և անպատիժ կողոպտում էին հայ ազգաբնակչությանը: 1909թ. մի քանի օրվա ընթացքում կոտորվեց մոտ 30000 հայ: «Այժմ այդպիսի զանգվածային ջարդեր չեն լինում,- նշում էր Ռոհրբախը,- սակայն ամեն տարի սպանվող հա-

յերի թիվը դժվար թե զիջի վերը բերված թվին: Թուրքիայի ամենակարևոր նահանգներից մեկում ներկայությունն իսկ քրիստոնեական ազգաբնակչության, որը հասցվել էր այնպիսի վիճակի, որ իր կյանքը փրկելու համար պատրաստ էր «նույնիսկ ռուսական հպատակություն» ընդունել, ծայրահեղ չափով անհաճո էր թուրքական կառավարությանը, ուստի և վերջինիս ձեռնտու է պահպանել այնպիսի մի իրավիճակ, որը կհանգեցնի Արևմտյան Հայաստանում հայերի աստիճանաբար բնաջնջմանը՝ չհասցնելով այն բացահայտ ապստամբության»: Ըստ Ռոհրբախի, այս պարագայում ևս Գերմանիայի շահերը համընկնում էին Թուրքիայի շահերին: Գերմանիայի համար կարևոր էր թուրքական տիրապետության ամրապնդումն Արևմտյան Հայաստանում և ծանր վիճակում գտնվող հայերի գաղթեցումը Միջագետք:

«Այսպիսով,- եզրակացնում էր Ռոհրբախը,- Հայաստանում որևէ կարգի վճռական ռեֆորմների անցկացումը, որոնք կարող էին հանգեցնել տեղի քրիստոնեական ազգաբնակչության վիճակի բարելավմանը, Գերմանիայի շահերին դեմ է: Եթե նույնիսկ նրան հարկ է որոշ աջակցություն ցույց տալ ռեֆորմներին, ապա այն չափով, որչափով դա կարող է կանխել Հայաստանում հասունացող ապստամբությունը»:[13]

5-րդ գլխում («Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից 1915-1916 թվականներին», էջ 229-297) հեղինակը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության խնդրին, անդրադառնում է նաև Գերմանիայի դերակատարմանը:

Հեղինակի խոսքերով՝ նաև եվրոպական տերությունների դիրքորոշման հետևանքով էր, որ երիտթուրքերին հաջողվեց իրականացնել արևմտահայության ցեղասպանությունը: Ըստ Սարգսյանի, կայսերական Գերմանիան շահագրգռված էր, որ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը տեղահանվի իր հայրենիքից, քանի որ դա կարող էր «նպաստել Մերձավոր արևելքում գերմանական նվաճողական նպատակների իրականացմանը»: Վիլհելմ 2-րդն Արևմտյան Հայաստանը դիտարկում էր որպես կարևոր հենակետ՝ Գերմանիայի գաղութային էքսպանսիայի ճանապարհին՝ այդ առիթով գերմանական դիվանագետներին ասելով. «Հայ ժողովուրդը շատ կենսունակ ժողովուրդ է և, կանգնած լինելով Արևելքի մեր պատմական ուղիների վրա, հատուկ ուշադրություն է պահանջում մեր դիվանագիտությունից»:[14]

Գերմանական իմպերիալիստներին, ըստ հեղինակի, հայերի հետ կապված երկու հիմնահարց էր հետաքրքրում: Առաջին. Անտանտի երկրների կողմից հայկական ազատագրական շարժման հավանական կիրառումը Թուրքիայի դեմ: Երկրորդ. Բաղդադի երկաթուղու շինարարության ավարտման տեսանկյունից հայերին Միջագետք աքսորելու օգտավետ լինելը, քանի որ նրանք դիտարկվում էին իբրև էժան աշխատուժ:

Գերմանական ժողովրդի մեջ Թուրքիայի՝ Գերմանիայի դաշնակցի, հեղինակությունը պահպանելու համար գերմանական կառավարությունն աշխատում էր թաքցնել հայ ազգաբնակչության իրական ճակատագիրը: Դրանով էր բացատրվում այն փաստը, որ Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունն ուղղակի ժխտում էր հայերի զանգվածային բնաջնջման իրողությունը՝ որակելով այդ ամենը «մաքուր երևակայության արգասիք»: Լեփսիուսը նշում է, որ պատերազմի ժամանակ գերմանական մամուլում արգելված էր անդրադառնալ հայերի նկատմամբ Թուրքիայում

գործադրվող բռնություններին: Առաջին աշխարհամարտի ընթացքում լինելով Կոստանդնուպոլսում՝ Լեփսիուսին, ինչպես հայտնի է, հաջողվում է բազմաթիվ նյութեր հավաքել հայերի վիճակի և թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության վերաբերյալ, որոնց հիման վրա էլ 1916թ. հրատարակվում է «Հաշվետվություն հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» գիրքը (Lepsius J. Bericht ueber die Lage des armenischen Volkes in der Tuerkei, Potsdam, 1916), որի տարածումը գերմանական գրաքննությունն արգելում է:

Այնուամենայնիվ, հայերի բնաջնջման լուրերը ներթափանցեցին Գերմանիա: Մի խումբ գերմանական գործիչներ կայսերական կառավարությանն երիտթուրքական ղեկավարների վրա ներգործման կոչ արեցին՝ հայերի զանգվածային ոչնչացմանը վերջ դնելու համար: Այն բռնագրավվեց գերմանական իշխանությունների կողմից:

1916թ. հունվարի 11-ին թուրքական գազանությունների մասին հարցումով ռայխստագում հանդես եկավ Կարլ Լիբկնեխտը՝ կարծիք արտահայտելով, որ հայերի բնաջնջման պատասխանատվությունն ընկնում է նաև կայսերական կառավարության վրա, քանի որ «ամբողջ աշխարհին հայտնի է, որ գերմանական սպաներն ու գեներալները տեր ու տնօրինություն են անում Թուրքիայում»: Սակայն նրա հարցումները նկատելի արդյունք չունեցան:

Երբ հայերի զանգվածային բնաջնջումների փաստը լայն տարածում գտավ աշխարհում և այլևս անհնար էր թաքցնել այն, գերմանական պաշտոնական շրջանները փոխեցին իրենց գործելակերպը և սկսեցին նվազեցնել դրանց իրական ծավալները: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող կոտորածների վերաբերյալ գերմանական մամուլը գրում էր. «...սպանվել են միայն խռովարարները, որոնք բռնվել են հանցանքի վայրում՝ արյունից կարմրած ձեռքերով, կամ էլ մերկացվել թուրքական կառավարության հանդեպ դավաճանության մեջ. ինչ վերաբերվում է կանանց ու երեխաներին, նրանց ոչ ոք ձեռք չի տվել...»:[15]

Բազմաթիվ, հատկապես Անտանտի երկրներում, Գերմանիային մեղադրում էին երիտթուրքական «գազանությունները խրախուսելու և դրանց իրականացմանն անմիջականորեն մասնակցություն ունենալու մեջ»: Հեղինակը նշում է այդ առիթով, որ Անտանտի երկրներում բարձրացված այդ քաղաքական կամպանիան մեծ վնաս պատճառեց Գերմանիայի նկարագրին:

Անդրադառնալով հայերի զանգվածային բնաջնջմանը գերմանացիների անմիջական մասնակցությանը՝ Սարգսյանը բերում է մի քանի օրինակ: Հիշատակելով Վանի դեպքերի մասին Գիբբոնսի վկայությունը՝ Սարգսյանը գրում է, որ գերմանական սպան անձամբ էր ղեկավարում հայ խաղաղ բնակչության վրա ուղղված հրետանային կրակը: Իրենց հերթին՝ Թուրքիայում գերմանական հյուպատոսները պաշտպանում էին հայերի դեմ իրականացվող բռնությունները:[16] «Temps» թերթը 1917թ. դեկտեմբերի 17-ին գրում էր, որ գերմանացիներն ոչ միայն հրահրում էին թուրքերին հայերի դեմ, այլև անմիջականորեն մասնակցում էին չարագործություններին: Մասնավորապես՝ Զեյթունում գերմանական հյուպատոսը համոզեց հայերին հանձնել զենքերը, որից հետո նրանց կոտորել էին: Նմանատիպ փաստեր է բերում նաև Բրայսը: Օրինակ՝ գերմանացիներն աջակցում էին հայերի բնաջնջմանը Դորթ-Յոլում:

Գերմանական դեսպան Վանգենհայմը 1915թ. հուլիսի 4-ին մեծ վեզիր Սաիդ Հալիմին ուղղված հուշագրում իր հավանությունն է տալիս Արևելյան Անատոլիայից հայերին արտաքսելու միջոցառումներին, որոնք «...թելադրվում են ռազմական նկատառումներով և օրինական պաշտպանության մի միջոց են»: Բնականաբար, Վանգենհայմը հրաժարվում էր հայերի օգտին քայլեր ձեռնարկել: Երբ ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն դիմում է նրան՝ երիտթուրքերի մոտ հայերի օգտին միջնորդելու խնդրանքով, Վանգենհայմը պատասխանում է. «Գերմանիան չի կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին»:

Ինչպես իր հետագա շարադրանքում նշում է Սարգսյանը, հայ ժողովրդի բնաջնջման գործում երիտթուրքերին աջակցություն էին ցույց տալիս գերմանական պաշտոնական այլ ներկայացուցիչներ ևս: Ստամբուլում գերմանական ծովային կցորդ Հյումանը, որը Վիլհելմ 2-րդի մտերիմներից էր, արդարացնում էր հայերի բնաջնջումը. «...թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ»: ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը հայտարարել էր, որ Թուրքիայում տեղի ունեցածը պետք էր դիտարկել որպես «...հայկական ապստամբությունը ճնշելու միանգամայն օրինական գործողություն»:

Գերմանական բուրժուական մամուլը նույնպես շրջանառության մեջ դրեց Թուրքիայում իբր պատրաստվող հայկական ապստամբության մասին Օսմանյան կառավարության կեղծ վարկածը: «Deutsche Tageszeitung»-ն իր էջերում զետեղեց հրապարակախոս կոմս Ռևենտլովի հոդվածը, որը հայերի զանգվածային տեղահանման մասին գրում էր, որ այն. «...անհրաժեշտ քայլ է ու Թուրքիայի սեփական գործը», իսկ մեկ միլիոն հայ նահատակներին տրվում էր «ապստամբներ» և «արյունարբուներ» որակումները:

«Frankfurter Zeitung»-ը դատապարտում էր անգլիական խորհրդարանում երիտթուրքերի դեմ հնչած ելույթները. «Ի՞նչ կանեին անգլիացիները ու ֆրանսիացիները, եթե նրանց մեջ ապրող որևէ մի ժողովուրդ լրտեսություն աներ հօգուտ թշնամու»:

Լեփսիուսը, ինչպես նշում է Սարգսյանը, Առաջին համաշխարհային պատերազմից հետո վերահրատակեց «Հաշվետվություն հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» գիրքը, որը լրացրել էր Թուրքիայում գերմանական դեսպանության ու հյուպատոսների կազմած զեկուցագրերի նոր նյութերով, որոնք մինչ այդ մատչելի չէին նրան: Այդ գրքում Լեփսիուսը մեղադրում էր կայսերական Գերմանիայի կառավարությանը՝ Թուրքիայի հայ ազգաբնակչության ճակատագրի հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի համար:

Գերմանիայի անմեղության վարկածը հիմնավորելուն էին ծառայում նաև Ս. Թեհլերյանի դատավարության ժամանակ որոշ վկաների ելույթները: Մասնավորապես, Լ. ֆոն Սանդերսը պնդում էր հայկական ջարդերում երիտթուրքերի անմեղության փաստը: Ըստ նրա, հայերի տեղահանությունը թելադրված էր ռազմական ու քաղաքական նկատառումներով, իսկ բոլոր դժբախտությունների պատճառը թուրքական ժանդարմներն էին, որոնք իրականացնում էին տեղահանման հրամանը: Սանդերսի խոսքերով՝ Գերմանիան անում էր ամենը, հայերի վիճակը թեթևացնելու համար:

Այդ շրջանի գերմանական որոշ պատմաբաններ բացահայտորեն արդարացնում էին հայերի զանգվածային ջարդերը: Վալտեր Լիրաուն Հայոց ցեղասպանության մեղավոր ճանաչում էր հայերին՝ մեղադրելով նրանց թուրք գյուղացիության «անխիղճ շահագործման» մեջ, իսկ հայերի նկատմամբ գործադրված բռնությունները բացատրելով իսլամի էությամբ՝ ֆանատիզմով ու այն «հերոսական գաղափարով», որ «...դու պետք է տարածես քո հավատը հրով ու սրով»:

1965թ. լույս տեսավ Ա. Եսայանի «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը» աշխատասիրությունը:[17] Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ Եսայանը համառոտ ակնարկ է կատարում առաջին գլխում («Հայերի գենոցիդը և միջազգային դիվանագիտությունը», էջ 25-128): Ըստ հեղինակի, արևմտյան տերություններից իմպերիալիստական Գերմանիան հանդես էր գալիս ոճրագործ Թուրքիայի հանցակցի դերում և իր դիվանագիտական ծրագրերի իրականացման ճանապարհին պատրաստ էր ցանկացած քայլի:[18] Թուրքիայի հայաջինջ քաղաքականության հանդեպ Գերմանիան իր համաձայնությունն ուրվագծել էր դեռևս սուլթան Աբդուլ Համիդի կողմից ձեռնարկված 1894-1896թթ. հայկական ջարդերի ժամանակ: Եսայանը հիշատակում է ռայխստագի անդամ Ֆրիդրիխ Նաումանի կողմից 1894-1896թթ. հայկական ջարդերի վերաբերյալ արտահայտած Գերմանիայի դիրքորոշումը, ուր նշվում էր, որ պետք է գործել բիսմարկյան ոգով, և Գերմանիայի ղեկավարները, որպես պետական մարդիկ, պետք է անտարբեր մնային Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների տառապանքների հանդեպ:[19]

Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, փաստորեն, այն անձն էր, որի հետ երիտթուրք կառավարիչները կարող էին հաշվի նստել, սակայն նա ոչինչ չարեց՝ հայերին փրկելու համար: Հեղինակը հիշատակում է նաև Գերմանիայի ծովային կցորդ Հյումանի խոսքերը, ըստ որի հայերը և թուրքերը չեն կարող մի երկրում ապրել: Դրանցից մեկը պետք է անհետանա, և թուրքերը միանշանակ իրավունք ունեն ոչնչացնել հայերին. թույլերը պետք է զոհվեն:[20]

Հիշատակվում են նաև Գերմանիայի պլանները՝ հայերին Միջագետք տեղափոխելու և նրանց միջոցով Բաղդադի երկաթուղու շրջաններն աշխուժացնելու հեռանկարով:

Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի ուսումնասիրության ոլորտում հաջորդ աշխատասիրությունը Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուն է, որը մեծարժեք սկզբնաղբյուրային նշանակություն ունի[21]: Գրքի նախաբանում հեղինակը գրում է. «Երիտթուրքերի կառավարությանը հովանավորում էր նրա «դաշնակիցը»՝ կայսերական Գերմանիան: Ելնելով Մերձավոր Արևելքում և Կովկասում իր ագրեսիվ պլաններից՝ այն ամեն կերպ օժանդակում էր մարդասպաններին կազմակերպել հայերի բռնագաղթը և նրանց ոչնչացումը: Ավելին, հաճախ Թուրքիայում գտնվող գերմանական սպաները մասնակցում էին երիտթուրքերի հանցագործություններին»:[22] Խնդրո առարկայի վերաբերյալ նյութերը զետեղված են ժողովածուի երկրորդ բաժնում («Հայերի մասսայական կոտորածը երիտթուրքերի կողմից (1909-1918)», էջ 165-497): Ավելի քան երկու տասնյակ փաստաթղթերում արծարծվում է կայսերական Գերմանիայի մեղսակցության հարցը:[23]

Նույն տարի Մոսկվայում հրատարակվեց Ա. Ավետյանի գիրքը,[24] ուր հեղինակն անդրադառնում է Գերմանիայի՝ հակահայկական դիրքորոշման դրդապատճառներին:

Գրքի առաջին գլխի («Գերմանիայի իմպերիալիստական քաղաքականությունը Մերձավոր Արևելքում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին», էջ 12-54) «Գերմանական իմպերիալիզմը և Հայկական հարցը Թուրքիայում 1913-1914թթ.» ենթագլխում (էջ 35-46) հեղինակը նշում է, որ նախքան պատերազմն Արևելյան հարցը և նրա մաս կազմող Հայկական հարցը կրկին մեծ տերությունների ուշադրության կենտրոնում էին և դրանց շուրջը բախվում էին այդ տերությունների շահերը, ինչը հատկապես ցայտուն արտահայտվում էր կայսերական Գերմանիայի և ցարական Ռուսաստանի փոխհարաբերությունների դեպքում:[25] Գերմանական իմպերիալիզմը դիտում էր Թուրքիան որպես իր քաղաքական և տնտեսական էքսպանսիայի օբյեկտ: Ինչպես նշում է Ավետյանը, քաղաքական և ռազմավարական տեսանկյուններից գերմանական իմպերիալիզմի համար Հայկական հարցի հայանպաստ լուծումը միայն կխանգարեր նրա պլանների իրականացմանը: Հեղինակը հիշատակում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պատասխանատու աշխատակից Ա. Ցիմերմանի կարծիքը, ըստ որի Ռուսաստանի սահմաններին պետք է ստեղծել մի իրավիճակ, որը կթուլացնի վերջինիս արտաքին հզորությունը:[26] Պարզ է, որ գերմանացի դիվանագետը նկատի ուներ հայերին: Դա է փաստում նրա հաջորդ միտքը. «...ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայաստանը, բնակեցված հայերով, վտանգավոր է Գերմանիայի շահերի համար, քանի որ հայերը հանդիսանում են Թուրքիայի թուլության աղբյուրը»: Վերը նշվածից գերմանացի դիվանագետը եզրակացնում էր. «...հայերին լիովին տրամադրել թուրքերի տնօրինությանը»:[27] Մյուս կողմից գերմանացիներն աշխատում էին բացահայտորեն հանդես չգալ թուրքաբնակ հայերի դեմ՝ հուսալով վերջիններիս օգտագործել Բաղդադի երկաթուղու շինարարության վրա:

Հետագա շարադրանքում Ավետյանը նկարագրում է հայկական բարեփոխումների շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը և Գերմանիայի կեղծավոր ու հակահայկական դերակատարումը:

Հիշատակվում է նաև Ռոհրբախի վերը նշված տեսակետը՝ հայերի և Հայկական հարցի վերաբերյալ, որը նա ներկայացրել էր 1913թ. վերջում գերմանական գլխավոր շտաբի սպաների նեղ շրջանակում: Ըստ Ռոհրբախի, Գերմանիայի խնդիրն էր թույլ չտալ Հայաստանում լուրջ ռեֆորմներ անցկացնել:[28] Գերմանիան պետք է նպաստեր հայերի տեղահանմանն իրենց հայրենիքից և տարբեր արտոնությունների ու դրամական օժանդակությունների միջոցով նրանց բնակեցներ Բաղդադի կառուցվող երկաթուղու երկայնքով: Հայերի լքյալ տարածքներն, ըստ Ռոհրբախի, պետք է բնակեցվեին թուրք-թաթարական ցեղերով, որով իսկ պողպատե պատնեշ կստեղծվեր Ռուսաստանի դեմ:[29]

Ավետյանն անդրադառնում է նաև «Գերմանա-հայկական ընկերության» գործունեությանը, որին բացասական գնահատական է տալիս:

1967թ. լույս տեսավ Ջ. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրությունը:[30] Իր գրքի երկրորդ գլխում («Հայկական հարցի վերաբացումը Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբին», էջ 117-259) հեղինակն անդրա-

դառնում է նախքան Առաջին համաշխարհային պատերազմը ստեղծված իրավիճակին՝ Հայկական հարցի և արևմտահայության ճակատագրի տեսանկյունից: Աշխարհի վերաձևավորման համար պայքարում Գերմանիան ակտիվ դեր էր խաղում, և նրա այդ պլաններում Թուրքիային մեծ տեղ էր հատկացվում: Հետզհետե քողարկված կերպով ուժեղանում էր Գերմանիայի ազդեցությունն այդ երկրում: Կիրակոսյանը հիշատակում է 1913թ. հուլիսի 28-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յագովի ցուցումը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին. «Թուրքիան պետք է մինչև այն ժամանակ պահպանի իր գոյությունը, քանի դեռ մենք ամրացնում ենք այնտեղ մեր դիրքերը և պատրաստ կլինենք նրա անեքսիային»:[31]

Հեղինակը նկարագրում է Գերմանիայի գործողությունները՝ ուղղված Թուրքիայում իր հեղինակության և ազդեցության ուժեղացմանը և նշում, որ այդ գործում գերմանական կողմը մեծ տեղ էր հատկացնում Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցմանը, որը սկսվել էր 1903թ.: Նշված երկաթուղին և գերմանական աճող տնտեսական հզորությունը Թուրքիայում հանդիսանում էին այն դրդապատճառները, որոնց հետևանքով Գերմանիայի հետաքրքրությունը Հայաստանի հանդեպ գնալով ավելի էր ուժեղանում. հայերի միջոցով Գերմանիան ցանկանում էր կենդանացնել Բաղդադի երկաթուղու երկայնքով ընկած անապատային հողերը:

Ըստ Կիրակոսյանի, Գերմանիայի կառավարողներն իրենց մերձավորարևելյան պլանների իրագործման մեջ առանձնահատուկ տեղ էին հատկացնում արևմտահայության խնդրին և այն լուծելու «կանիբալական» մեթոդ էին առաջարկում: Ինչպես իր շարադրանքում ցույց է տալիս հեղինակը, Գերմանիան ընդհանուր առմամբ համաձայն էր հայերին լիովին թողնել թուրքերի քմահաճույքին՝ լավ իմանալով, թե թուրքերը ինչ միջոցներ են գերադասում կիրառել նրանց դեմ:

Գերմանական հետախույզները և փորձագետներն այն կարծիքին էին, որ հայերը Թուրքիայի ներքին կյանքում անչափ կարևոր դերակատարում ունեին, և որ գերմանական կառավարությունը նրանց առանձնակի ուշադրություն պետք է դարձնի՝ որպես ապագա արևելյան գերմանական կայսրության համար անչափ կարևոր մի տարր:[32] Այդ պատճառով Գերմանիան աշխատում էր մեծացնել իր ազդեցությունն Արևմտյան Հայաստանում:

Ըստ հեղինակի, ֆոն դեր Գոլցը, Յագովը, Լեփսիուսը, Ռոհրբախը այն միտքն էին արտահայտում, որ Թուրքիայի ապագան Ասիայում է, և որ այդ տեսանկյունից անչափ մեծ դեր էր խաղում Թուրքահայաստանը:[33] Կիրակոսյանը նույնպես հիշատակում է Ռոհրբախի նախագիծը՝ կապված հայերի տեղահանության, նրանց փոխարեն թուրքերի վերաբնակեցման և վերոհիշյալ այլ գաղափարների հետ: Ի դեպ՝ այս մտքերը Ռոհրբախը ավելի ցայտուն և ծավալուն կերպով ներկայացրել էր իր գրքում, որի ռուսերեն թարգմանությունը 1915թ. լույս էր տեսել Մոսկվայում. (П. Рорбах, Война и германская политика, с предисловием проф. С. А. Котлеровского. М., 1915):

Ինչպես նշում է հեղինակը, գերմանական բոլոր հայագետները հաստատում էին, որ Ռուսաստանի հետ պատերազմի դեպքում Թուրքիայի հայ բնակչության վրա հույս դնելն անհնար էր: Գերմանական քաղաքականությունը վերջնականապես հանգեց արևմտահայության դեմ թուրքա-

կան կառավարության բռնած ջարդարարական դիրքին այն բանից հետո, երբ ցարական կառավարության «հայասիրական» գործողությունները տվեցին իրենց պտուղները:[34]

Հիշատակվում է նաև Թուրքիայի և Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի միջև գաղտնի դաշնակցային պայմանագրերի կնքման և Թուրքիայի՝ պատերազմ մուտք գործելու մասին:

Երրորդ գլխում («1915 թվականի Մեծ եղեռնը», էջ 259-410) արդեն անմիջականորեն ներկայացվում է հայասպանության պատմությունը: Շարադրանքի ընթացքում Կիրակոսյանն անդրադառնում է նաև կայսերական Գերմանիայի մեղսակցության հարցին: Նա նշում է, որ պատերազմի նախօրյակին Բուխարեստում գերմանական դեսպանատանը տեղի ունեցած թուրք-գերմանական բարձրաստիճան ներկայացուցիչների խորհրդակցությունում արդեն որոշվել էր տեղահանել և ոչնչացնել Օսմանյան կայսրության արևելյան վեց վիլայեթների, Կիլիկիայի և մյուս հայաշատ վայրերի հայությանը: Դրա ընթացքում քննարկվել էին Բաղդադի երկաթուղու երկայնքով գերմանական գաղթավայրեր ստեղծելու, հայերին այնտեղ բնակեցնելու և այլ հարցեր:[35] Տարբեր փաստեր են բերվում Կարինում, Շապին-Գարահիսարում, Մուշի շրջանում, Ուրֆայում և Զեյթունում հայերի բնաջնջմանը գերմանական ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ: Նշվում է նաև, որ գերմանական սպաները թշնամաբար էին տրամադրված նաև արդեն տեղահանված հայերի, մասնավորապես, Ինքիլիի, Հալեպի և Այրանի միջև ընկած տարածքում գտնվողների հանդեպ:

Չորրորդ գլխում («Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից», էջ 410-518) Կիրակոսյանն արդեն անմիջականորեն ներկայացնում է կայսերական Գերմանիայի մեղսակցության փաստը, մասնավորապես այն, որ Էնվերն ու Թալեաթը, մինչև մասսայական տեղահանությունները և կոտորածների սկսելը, խորհրդակցել էին Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հետ և նրան տեղյակ էին պահել այդ մասին: Վերջինս հավանություն էր տվել այդ նախագծին և համապատասխան ցուցումներ էր արել Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի ու Բաղդադի հյուպատոսներին: 1915թ. մայիսի 31-ին դեսպանը կրկնում էր թուրքական կառավարության տեսակետը՝ հայկական ապստամբության կողմից Թուրքիային սպառնացող երևակայական վտանգի մասին, իսկ գերմանական դեսպանության ծովային կցորդ Հյումանը, որը Գերմանիայի կայսեր Վիլհելմ 2-րդի մերձավորներից էր, բացահայտ հայտարարել էր. «...թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ»:[36] Նշվում է նաև գերմանական կողմի անգործությունը և բողոքների ձևական բնույթը: Մի հետաքրքիր փաստ ևս. երբ պատերազմի ժամանակ Լեփսիուսը Կոստանդնուպոլսում հանդիպում է Թալեաթի հետ և հարց բարձրացնում Միջագետքի անապատներում գտնվող հարյուր հազարավոր հայերի կյանքը խնայելու մասին, վերջինս, որպես իրենց ոճիրների արդարացում, ասել է. «Ինչ որ դուք (իմա՝ գերմանական ղեկավարները) ասում եք, մենք կատարում ենք Ձեր ծրագիրը»:[37]

Ինչպես նշում է Կիրակոսյանը, հայերին տեղահանելու և անապատային վայրեր ուղարկելու միտքն առաջին անգամ տվեցին հենց գերմանական քաղաքագետները՝ ֆոն դեր Գոլցը, ֆոն Սանդերսը, Ռոհրբախը, Նաումանը և այլք: Նրանք չէին թաքցնում, որ հայերը պատնեշ էին հանդիսանում իրենց «ռազմական նպատակների ճանապարհին»:[38]

Հեղինակը ներկայացնում է Գերմանիայի հակահայկական դիրքորոշման դրդապատճառները: Այդ առթիվ նշվում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հայտարարությունը, որ Հայաստանը «...ցցվում է Գերմանիայի քաղաքական ու տնտեսական ծավալման ճանապարհին և դրա համար հայը պետք է անհետանա և մեջտեղից վերանա»:[39]

Առանձնահատուկ շեշտվում է վերը նշված դիրքորոշման հիմնականում Գերմանիայի պաշտոնական շրջաններին բնորոշ լինելու հանգամանքը, քանզի գերմանական հասարակության շատ ներկայացուցիչներ այլ կարծիքի էին: Նրանց շարքում Կիրակոսյանը նշում է Լեփսիուսին և Լիբկնեխտին:

Նույն՝ 1967 թվին լույս տեսավ Ս. Հակոբյանի մենագրությունը[40], որի առաջին գլուխը («Արևմտյան Հայաստանը կայսերական Գերմանիայի պլաններում և նրա պատասխանատվությունը արևմտահայերի ցեղասպանության մեջ», էջ 36-70) նվիրված է խնդրո առարկա թեմային, մասնավորապես այն հարցին, թե ինչպե՞ս էր Գերմանիան քայլ առ քայլ Թուրքիային առնում իր ենթակայության տակ: Այդ գործընթացի տրամաբանությամբ է թելադրված այն փաստը, որ Գերմանիան դեռևս 1894-1896թթ. հայկական ջարդերի ժամանակ արդարացնում էր սուլթան Աբդուլ Համիդի գործողությունները: Հեղինակը, մասնավորապես, մատնանշում է այն ժամանակ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Զաուրմայի դերակատարումը, որը հավաստիացնում էր սուլթանին, որ «հայկական ապստամբության ճնշումը» նրա իրավունքն ու պարտականությունն է, որպես գերիշխանի և ըստ ամենայնի արդարացնում էր Աբդուլ Համիդի կողմից գործադրած «խիստ միջոցները»:[41]

Հակոբյանը վեր է հանում այն պատճառները, որոնց առիթով Գերմանիան հավանության էր արժանացնում Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը: Դրանցից ամենածանրակշիռն այն էր, որ գերմանական իմպերիալիստները Թուրքիայի գաղութացման գործում մեծ տեղ էին հատկացնում Արևմտյան Հայաստանին որպես մի պլացդարմի՝ Ռուսաստանի և Անգլիայի դեմ հետագա գործողություններ ծավալելու համար: Նրանք ցանկանում էին այդ տարածքը բնակեցնել գերմանա-թուրքական բլոկին հավատարիմ բնակչությամբ, քանի որ հայերն այդ դերին չէին համապատասխանում: Հակոբյանը հիշատակում է Պաուլ Ռոհրբախի ծրագիրը, որով ենթադրվում էր մաքրել Արևմտյան Հայաստանը ոչ հավատարիմ հայերից, միաժամանակ նույն հայերի միջոցով բնակեցնել և շենացնել Միջագետքը, որտեղով անցնելու էր Բաղդադի երկաթուղին:[42] Դրա հետ մեկտեղ Ռոհրբախը քարոզում էր հայերի ուղղակի ֆիզիկական ոչնչացում. «Հայաստանը հանդիսանում է ամենավտանգավոր և համարյա միակ օջախը, որտեղ կարող են բռնկվել ներքին լուրջ անկարգություններ, ընդ որում այդ հրդեհը կարող է փոխանցվել թուքական կայսրության այլ մասերի վրա, որոնք թեև այդ տեսանկյունից պակաս վտանգավոր են: Դրա համար Հայաստանում հանդարտության հաստատումը ներկա պահին պետք է լինի թուրքական կառավարության ամենակարևոր խնդիրներից մեկը: Նույնը, հետևաբար, հանդիսանում է և մեր գերմանական քաղաքականությունը... Հայերի բնաջնջումը հանդիսանում է ձևերից մեկը՝ տարածաշրջանում հանդարտություն հաստատելու և այն Թուրքիայի կազմում ավելի ամրապնդելու համար»:[43] Հակոբյանը հիշատակում է նաև Գերմանիայի արտաքին գործերի պետական քարտուղարի տեղակալ Արտուր Ցիմերմանի՝

1913թ. դեկտեմբերի հայտարարությունն այն մասին, որ ըստ էության հայերը պետք չեն Գերմանիային, Հայաստանը, բնակեցված հայերով, վտանգավոր է Գերմանիայի շահերի համար:[44]

Գերմանական իմպերիալիստական շրջանակները համակարծիք էին հայերի տեղահանման հարցում: Միայն մեկ հարց էր վիճահարույց նրանց համար. ում բնակեցնել հայերի լքյալ տարածքներում: Կարծիքները բազմազան էին. մի մասը կողմակից էր թուրքերի վերաբնակեցմանը, մի մասը՝ արաբների, երրորդները՝ ընդհանրապես մուսուլմանների, մի մասն էլ, ինչպես Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, լեհական հրեաների:

Հայերին տեղահանելու գերմանական պլանները տարածվում էին նաև Կիլիկիայի վրա, քանի որ այն իմպերիալիստական տերությունների պայքարում ամենացանկալի նպատակներից մեկն էր: Գերմանացիները ցանկանում էին այնտեղից հեռացնել հայերին՝ հետագա տնտեսական մրցակցությունից խուսափելու համար:

Սակայն և թուրքերը և գերմանացիները հասկանում էին, որ հայերին տեղանելու-կոտորելու նախագիծը իրականացնելու համար բարենպաստ պայմաններ էին հարկավոր: Իսկ մինչ այդ Գերմանիան Արևմտյան Հայաստանում միսիոներական կազմակերպությունների և գերմանական հյուպատոսությունների միջոցով (Տրապիզոնի և Մոսուլի) ակտիվ գործունեություն էր ծավալել: Այդ գործն ավելի արդյունավետ դարձնելու համար Գերմանիան 1913թ. Էրզրումում նոր հյուպատոսություն բացեց, որի ղեկավար նշանակվեց փորձառու ռազմական գործակալ Էդգար Անդերսը:

Հեղինակը ցույց է տալիս Թուրքիայում գործող գերմանական ներկայացուցիչների մեծ մասի երկակի գործունեությունը՝ նրանցից մեծ մասը կատարում էին նաև հետախուզական աշխատանք:

Հակոբյանն անդրադառնում է նաև «Գերմանա-հայկական կոմիտեի» (որը հետագայում վերածեց և դարձավ «Գերմանա-հայկական ընկերություն»), ինչպես նաև «Գերմանա-հայկական միսիոներական ընկերության» գործունեությանը:

Արևմտյան Հայաստանում կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության նախապատերազմյան հատվածի դիտարկումը հեղինակը վերջացնում է հայկական բարեփոխումների նկատմամբ Գերմանիայի դիրքորոշման և դերակատարման նկարագրությամբ, որն իր բնույթով հակահայկական էր:

Գալով բուն Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ Գերմանիայի դերակատարման քննարկմանը, հեղինակն այն միտքն է արտահայտում, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին գերմանացիները դարձել էին Թուրքիայի լիիրավ տերերը: Միայն այս փաստից ելնելով, ըստ Հակոբյանի, կարելի է հետևություն անել, որ երիտթուրքերի իրագործած հայկական ջարդերի մեջ պատասխանատու են նաև իրենց տերերը՝ գերմանացիները, եթե նույնիսկ չլինեին արևմտահայերի ցեղասպանության գերմանական պլանները:[45] Դա հասկանում էին Բեռլինում և դրա համար հայկական ջարդերի սկզբնական շրջանում հերքում դրանց գոյությունը: Այնուհետև, երբ իրողությունը թաքցնելն այլևս անհնար էր, գերմանացիները սկսեցին արդարացնել երիտթուրքերի քաղաքակա-

նությունն՝ ամբողջ մեղքը բարդելով հայերի վրա: Այս հարցում հատկապես աչքի էր ընկնում կոմս Էրնստ ֆոն Ռևենտլովը:

Սակայն գերմանացիների մեղսակցությունը միայն դրանով չէր սահմանափակվում. Հակոբյանը բերում է մի շարք փաստեր, որոնք ցույց են տալիս, որ գերմանացիներն անմիջականորեն մասնակցել են հայերի կոտորածների նախապատրաստմանը:

Վերջում Հակոբյանը ևս նշում է, որ Գերմանիայում կային մարդիկ, որոնք իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում Հայոց ցեղասպանության և դրանում կայսերական Գերմանիայի դերակատարման դեմ: Դրանց շարքում հիշատակվում են Լիբկնեխտը, Լեդեբուրը, Հաազեն, Մարկվարտը, Շտյուրմերը:

1969թ. հրատարակվեց Մ. Արզումանյանի ստվարածավալ մենագրությունը:[46] Իր աշխատության առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Արևմտյան Հայաստանը թուրքական բռնակալության արյունոտ ճիրաններում», էջ 18-74) Արզումանյանը ներկայացնում է, թե ինչպես Գերմանիան հետզհետե Թուրքիային ներգրավեց իր շահերի ոլորտը և դրեց իր հնազանդության տակ: Հեղինակը ևս Բաղդադի երկաթուղին համարում է Մերձավոր և Միջին Արևելքում Գերմանիայի գաղութարարական քաղաքականության արտահայտություն, և նշում, որ այն ձեռք բերվեց և իրականացվեց հայ ժողովրդի արյան գնով:[47] Գերմանիան հանդիսանում էր Աբդուլ Համիդի արյունոտ ռեժիմի պաշտպանը: Գերմանակուսն դեսպան Զաուրման 1896թ. հայկական ջարդերի կազմակերպման ժամանակ սուլթան Աբդուլ Համիդի անձնական խորհրդատուն էր: Նա հավաստիացնում էր սուլթանին, որ հայերին կոտորելը նրա իրավունքն ու պարտականությունն է և, հետևաբար, արդարացի են բոլոր խիստ միջոցները:[48] Կայսերական վարչապետ Հոհենլոեն արդարացնում էր ջարդերը և ամեն ինչում մեղադրում հայերին: Հայկական ջարդերից ընդամենը երկու տարի էր անցել, երբ Վիլհելմ 2-րդը մեծ և ներկայացուցչական շքախմբով այցելեց Կոստանդնուպոլիս:

Արզումանյանը նշում է, որ հեղափոխությունից հետո մի պահ թվում էր, թե Գերմանիայի դիրքերը թուլացել են Թուրքիայում: Սակայն դա թվացյալ նահանջ էր և շուտով պարզ դարձավ, որ գերմանա-թուրքական հարաբերություններն որակական նոր մակարդակի էին բարձրանում, որն, առաջին հերթին, վերաբերվում էր ռազմական ոլորտին: Ինչ վերաբերվում է Հայկական հարցին և հայերին, ապա այստեղ գերմանացիների մոտեցումն անփոփոխ էր: Նրանց հետաքրքրում էին Կիլիկիայի բամբակը և Արևմտյան Հայաստանի բնական հարստությունները, հայոց լեռնաշխարհի ստրատեգիական դիրքը և Մերձավոր Արևելքում ամրանալու հեռանկարը: Նրանց տեսակետն այն էր, որ հայությունը օտար տարր է, որին պետք է ոչնչացնել կամ արտաքսել Միջագետքի անապատները:[49]

Ի հավաստումն այն փաստի, որ Գերմանիան խրախուսում էր Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը Արզումանյանը որպես օրինակ նշում է Գերմանիայի ստատս սեկրետար Ցիմերմանի՝ 1913թ. հետևյալ հայտարարությունը. «...Ըստ էության հայերը պետք չեն Գերմանիային. Հայաստանը՝ բնակեցված հայերով, վնասակար է նրա շահերին... Հայաստանից ստացված բոլոր զեկույցները վկայում են այն մեծ հույսերի մասին, որ այդ ժողովուրդը տածում է Ռուսաստանի նկատմամբ... Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգից խուսափելու համար

Գերմանիան ըստ էության պետք է հայերին թողնի թուրքերի լիակատար տնօրինության տակ»:[50] Հեղինակը գրում է, որ Գերմանիան մշակել էր նաև Հայկական հարցի լուծման կոնկրետ պլան և մատնանշում Պաուլ Ռոհրբախի՝ արդեն հայտնի նախագիծը:

Մյուս ենթագլխում («Հայկական հարցը 1912 – 14 թվականներին», էջ 74-126) մասնավորապես խոսվում է հայկական բարեփոխումների և կայսերական Գերմանիայի այդ ժամանակաշրջանում նս երկդիմի ու շահադիտական քաղաքականության մասին: Անառարկելի փաստերը ցույց են տալիս, որ պատերազմի նախօրյակին Թուրքիան՝ Գերմանիայի հովանավորությամբ, նախապատրաստում էր հայկական կոտորածներ: Երզրումում ռուսական գլխավոր հյուպատոս Աղամովի՝ 1913թ. դեկտեմբերի 29-ի և 1914թ. հունվարի 6-ի զեկույցներում ասվում է, որ երիտթուրքերը՝ գերմանական հյուպատոս Անդերսի նախաձեռնությամբ, կազմակերպում են հրաձգության վարժություններ, հավաքագրում հանցագործների և սպասում հարմար առիթի՝ հայերի ջարդերը սկսելու համար:[51]

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում («Պատերազմի ծագումը, պատճառներն ու բնույթը: Հայաստանը իմպերիալիստական պետությունների զավթողական պլաններում», էջ 126-164) Արզումանյանը, խոսելով Գերմանիայի նվաճողական ծրագրերի մասին, նշում է, որ դրանցում նշանակալից տեղ էր հատկացվում Կովկասին ու Հայաստանին: Այդ հարցում, ինչպես հայտնի է, առանցքային դերակատարներից էր Պաուլ Ռոհրբախը: Հեղինակը ներկայացնում է Ռոհրբախի որոշ մտքերը՝ կապված Թուրքիայի ապագայի գործում Հայաստանի դերի մասին:

Ներկայացվում են նաև Թուրքիայի աշխարհակալ պլանները և նշվում, որ դրանք իրականացնելու համար երիտթուրքերը ցանկանում էին հենվել Գերմանիայի վրա: Թուքերը մեծ նշանակություն էին տալիս բանակի բարելավման գործին և այդ հարցում համագործակցում էին Գերմանիայի հետ, որը ռազմական առաքելությունների միջոցով վերակառուցում էր թուրքական բանակը: Վերջին առաքելության ղեկավարն էր Լիման ֆոն Սանդերսը և, ինչպես նշում է Արզումանյանը, նրա ժամանումով ավարտվեց Թուրքիայի անցումը Գերմանիայի կողմը:[52] Արդյունքում՝ 1914թ. օգոստոսի 2-ին կնքվեց գերմանա-թուրքական դաշնային գաղտնի պայմանագիրը:

Երիտթուրքերի խորհրդատուներից ու ոգեշնչողներից մեկն էր նաև նախապատերազմական ժամանակշրջանում Թուրքիայում գտնվող ռենեգատ Պարվուսը (Գելֆանդ):

Պատերազմի ժամանակ Թուրքիան մեծ հույսեր էր կապում կրոնական գործոնի հետ: Գերմանիան լիովին պաշտպանում էր այդ քաղաքականությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիան պանիսլամիզմի քարոզչության համար Թուրքիային տրամադրեց ընդհանուր առմամբ 17,5 մլն լիրա՝ ոսկով:[53]

Երրորդ գլխի («Մեծ ոճիրը և նրա հանցավորները», էջ 294-655) առաջին ենթագլխում («Հայերի բնաջնջման թուրք-գերմանական ծրագիրը և նրա մշակման ու իրականացման շարժառիթ-«պատճառները», էջ 294-312) Նշվում է, որ թուրքերը և գերմանացիները միակարծիք էին հայերին վերաբերվող հարցերում: Երկու կողմն էլ հայերի մեջ տեսնում էին խոչընդոտ՝ իր նպատակների իրականացման ճանապարհին: Եվ դա կապված էր, առաջին հերթին, հայերի ռուսամետության հետ: Հեղինակը նշում է, որ

հայերի բռնագաղթի ծրագիրն ունի գերմանական ծագում, որի ջատագովներից էին Պաուլ Ռոհրբախը, ֆոն դեր Գոլցը և Լիման ֆոն Սանդերսը և որը ստացել էր վիլհելմյան և սուլթանական կառավարությունների հավանությունը: Այստեղ Արզումանյանը կրկին անգամ անդրադարձ է կատարում Ռոհրբախի արտահայտած մտքերին՝ կապված հայերի ապագայի և Հայկական հարցի լուծման հետ:[54]

Նույն գլխի Երկրորդ ենթագլխում («Արևմտահայության բռնագաղթն ու կոտորածը», էջ 312-485) հեղինակն անմիջականորեն խոսում է ցեղասպանության առանձին փուլերի մասին (մտավորականների ոչնչացում, բանակում ծառայող հայերի ոչնչացում, մնացյալ հայության կոտորած) և անդրադառնում Օսմանյան կայսրության առանձին շրջաններում իրականացված հայերի բնաջնջման, ինչպես նաև հայերի կողմից ցույց տրված հերոսական ինքնապաշտպանության դրվագներին:

Շարադրանքի ընթացքում Արզումանյանն անդրադառնում է նաև մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող թեմային: Խոսելով հայ զինվորականների ոչնչացման մասին՝ հեղինակն ընդգծում է, որ այդ գործում իրենց մասնակցությունն ունեին և գերմանացի սպաները: Որպես օրինակ բերվում են Էրզրումի դեպքերը, երբ զորահանդեսի ժամանակ նրանք հայերից վերցնում էին նրանց զենքերը:[55]

Խոսելով Վանի դեպքերի մասին՝ Արզումանյանը նշում է, որ երիտթուրքերն աշխատում էին հայերի դեմ կիրառվող վայրագություններն արդարացնել վերջիններիս կողմից բարձրացրած ապստամբության պատրվակով: Այդ տեսակետը հավանության էր արժանացել Գերմանիայի դեսպան Վանգենհայմի կողմից, որը 1915թ. մայիսի 31-ի իր զեկույցում նշում էր, որ թուրքական միջոցներն անշուշտ ծանր հարված են հայերի համար, սակայն գերմանական կողմը կարող է միայն մեղմել դրանք, բայց ոչ արգելել: Վանգենհայմը անշուշտ գիտեր, որ իրականում երիտթուրքական կառավարության միջոցառումները հետապնդում են հայերի լիովին բնաջնջման նպատակ: Այդ մասին 1915թ. հուլիսի 7-ին նա հաղորդում էր Գերմանիայի վարչապետ Բեթման-Հոլվեգին:[56] Խոսելով բուն Վանի հերոսամարտի մասին, նշվում է, որ թուրքական կողմի հրետանային կրակը Վանի պաշտպանների վրա ղեկավարում էին գերմանական փորձառու սպաները:

Խոսելով Կարինի ու Տրապիզոնի իրադարձությունների մասին՝ հեղինակը նշում է, որ երիտթուրքերի ջարդարարական քաղաքականությունը խրախուսում էին Կարինում գտնվող գերմանական պաշտոնյաները և սպաները՝ Գուզի բեյը, Ստաազեշը, Շեոպները, Սթանկերը և այլն: Մի այլ դրվագ. Կարինի բերդի գերմանացի հրամանատար Պոսսելտը կարգադրել էր զինաթափել թուրքական բանակի հայ զինվորներին և քշել ճամբարներ:[57] Բացի այդ՝ գերմանացիները Կարինում անմիջականորեն մասնակցում էին հայերի բռնագաղթի և կոտորածի իրականացմանը, ինչի վերաբերյալ բերվում են մի քանի օրինակներ: Նույն պատկերն էր նաև Պոնտոսում, ուր հայերի ոչնչացման գործում իր դերն ուներ գերմանական հյուպատոս Շուլենբուրգը: Գերմանական սպաները ուղղում էին հրետանային կրակը հայերի վրա նաև Մուշում: Խարբերդում գերմանական քոլեջի պետ Յոհաննես Էհմանը պատերազմը բռնկվելուց հետո թուրք պաշտոնյաների հետ միասին շրջում էր հայկական գյուղերում և, կեղծ խոստումներ տալով նրանց բնակիչներին, զենք էր հավաքում:[58]

Կիլիկիայում գտնվող Քեսապի հայ ազգաբնակչության ոչնչացման մեջ իր դերակատարումն ունեցավ գերմանացի միսիոներ Հընրքը, որը հայերի մեջ քարոզում էր հնազանդություն թուրք իշխանությունների հանդեպ, իսկ մյուս կողմից թուրքական իշխանություններին էր մատնում առավել ակտիվ հայերին: Ի վերջո նրա այդ քաղաքականության հետևանքով քեսապահայությունը չկարողացավ դիմել ինքնապաշտպանության, և շուրջ 5000 հոգի զոհ գնացին թուրք ջարդարարներին:[59]

Գերմանացիների մասնակցությունը հայերի բնաջնջման մեջ առավել ցայտուն էր Ուրֆայում, ուր հայ բնակչությունը դիմել էր համառ և հերոսական ինքնապաշտպանության: Ուրֆացիների դեմ գործող թուրքական բանակը գլխավորում էր Ֆահրի փաշան: Նրան ակտիվ աջակցում էր գերմանացի գնդապետ Վոլֆսքիլը: Երբ թուրքական բանակի գրոհները նպատակին չեն հասնում, Ֆահրի փաշան ուրֆացիների հետ բանակցությունների է ուղարկում տեղի գորգի գործարանի տնօրեն գերմանացի Մ. Էքարտին: Նա պահանջում է դադարեցնել դիմադրությունը և հանձնվել: Մեկ-ժամյա բանակցություններից հետո Էքարտը ժխտողական պատասխան է ստանում: Այդժամ նա սպառնում է՝ վերադառնալուն պես անձամբ ղեկավարել թնդանոթաձգությունը: Հոկտեմբերի 12-ին էլ ավելի է սաստկանում կրակը, որն անմիջականորեն ղեկավարում էր թուրքական սպայակույտի հրամանատար գնդապետ ֆոն Էքսֆեյլը:[60]

Ինչպես հայտնի է, բռնագաղթի ճանապարհին չզոհված հայերի ճնշող մեծամասնությունն իր մահը գտավ անապատներում, ուր նրանք քշվել էին: Սովը, համաճարակները և յաթաղանը կենդանի մնալու համար ոչ մի հնարավորություն չէին թողնում: Այստեղ ևս թուրքերը գտնում էին գերմանական պաշտոնյաների և զինվորականների լիակատար աջակցությունը: Որպես օրինակ Արզումանյանը նշում է Մոսուլի շրջանի գերմանացի հրամանատար Շումանին, որը հայկական ջարդերի ակտիվ մասնակից էր:[61]

Երրորդ ենթագլխում («Մեծ ոճրի հանցավորները», էջ 485-552) հեղինակն ուղղակիորեն հայտարարում է, որ հայկական Եղեռնի երկրորդ գլխավոր հանցավորն ու պատասխանատուն իմպերիալիստական Գերմանիան էր: Նախ այն, որ վիլհելմյան Գերմանիայի օժանդակությամբ էր, որ Թուրքիան՝ Եվրոպայի «հիվանդ մարդը», ոտքի կանգնեց: Երկրորդ, Անտանտի թշնամի Գերմանիան Թուրքիայի հետ միասին դեմ էր ռուսական դիրքորոշում ունեցող հայերին, որոնց հարկավոր էր կամ կտրել Ռուսաստանից, կամ էլ քշել Ռուսաստանի սահմաններից հեռու՝ դեպի արաբական անապատները, մեծ մասին կոտորելով, իսկ մնացածներին օգտագործելով որպես էժան աշխատուժ Բաղդադի երկաթուղու կառուցման համար: Հենց այդպիսի պլան կազմեցին գերմանա-թուրքական զինակցության ղեկավարները, ինչը հանգեցրեց հայկական Մեծ Եղեռնին: Դա, հեղինակի կարծիքով, գերմանական ծրագրով ու թուրքական մեթոդներով իրականացված ոճիր էր:

Ըստ Արզումանյանի, հայերին ոչնչացնելու ծրագիրը մշակվել էր Բեռլինում ու Կոստանդնուպոլսում և ամեն ինչ կատարվում էր գերմանական կառավարության համաձայնությամբ: Վերջինս Թուրքիայի վրա ուներ համարյա անսահմանափակ ազդեցություն և ցանկության դեպքում կարող էր կանգնեցնել կամ գոնե մեղմել հայերի բնաջնջումը: Սակայն դա

ձեռնտու չէր Գերմանիային, քանի որ հայերը խոչընդոտ էին հանդիսանում իր զավթողական պլանների ճանապարհին:[62]

Վիլհելմյան կառավարության հայասպան քաղաքականությունը Թուրքիայում հետևողականորեն կյանքի էին կոչում այնտեղ գտնվող գերմանական պաշտոնյաներն, որոնց մեջ առանձնակի հանցավոր դերակատարում ուներ դեսպան Վանգենհայմը: Նա ամեն կերպ աջակցում էր թուրքերի հայաջինջ քաղաքականությանը, միաժամանակ խուսանավելով՝ աշխատում էր հայերի բարեկամ ձևանալ, ժխտել կոտորածների փաստը և այլն:

Վանգենհայմի հաջորդը՝ կոմս Մետտերնիխն, առաջին հայացքից բարյացակամ էր հայերի նկատմամբ, սակայն դա երևութական էր: Սա է հեղինակի կարծիքը: Նա ավելացնում է, որ Թուրքիայում գտնվող գերմանական մյուս պաշտոնյաներն ակտիվորեն մասնակցում էին հայերի կոտորածների կազմակերպմանը:

Դրա հետ մեկ տեղ Արզումանյանը նշում է, որ Թուրքիայում գտնվող ոչ բոլոր գերմանացիներն էին նման կերպ վարվում և որպես օրինակ հիշատակում է Մարտին Նիեպագեին և նրա խոսքերը առ այն, որ հայկական ահավոր եղեռնը կմնա որպես «խայտառակ բիծ գերմանական գերբի վրա»:[63]

Բուն Գերմանիայում թաքցնում կամ արդարացնում էին հայկական կոտորածները: Հեղինակը նշում է, որ վիլհելմյան Գերմանիան ոչ միայն օգնեց Թուրքիային՝ կազմակերպել հայերի բնաջնջումը, այլև ամեն կերպ օգնեց՝ մոլորեցնելու միջազգային հասարակական կարծիքը: Գերմանիայի օգնությամբ թուրքերը հակահայկական քարոզչություն էին վարում նաև արտասահմանյան երկրներում՝ բացահայտ արդարացնելով հայկական կոտորածները: Հատկապես ակտիվ էր այդ գործում կոմս Էռնստ Ռևենտլովը, որը գրում էր. «...Թուրքիան ոչ միայն իրավունք, այլև պարտականություն ուներ պատժել ըմբոստ և արյան ծարավ հայերին»: «Պետք է ընդունել, որ մեր գործը չէ խղճալ ճակատագրին վրա հայ հեղափոխականներու և վաշխառուներու, որոնք կներկայացնեն մեծ վտանգ մը մեր հավատարիմ դաշնակցին համար, և որոնք գործիք են մեր մահացու թշնամիին, Անգլիայի և Ռուսիայի»:[64]

Եվ, վերջապես, չորրորդ ենթագլխում («Առաջադեմ մարդկությունը հայ ժողովրդի պաշտպանության դիրքերում», էջ 552-609) խոսքը գնում է գերմանական հասարակության այն ներկայացուցիչների մասին, որոնք, չնայած կայսերական Գերմանիայի պաշտոնական դիրքին և հակահայկական քաղաքականությանը, իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում այդ ամենի դեմ: Արզումանյանը նշում է Կարլ Լիբկնեխտի, Յոհաննես Լեփսիուսի, Յոզեֆ Մարկվարտի անունները:

1975թ. ռուսերեն լեզվով լույս տեսավ Ս. Ստեփանյանի մենագրությունն, ուր նա ուսումնասիրության առարկա է դարձնում կայսերական Գերմանիայի քաղաքականությունը Հայաստանի հանդեպ 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին:[65] Մասնավորապես՝ ուշադրության է արժանի Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Հայոց ցեղասպանությանը կայսերական Գերմանիայի մասնակցության հարցի արծարծմանը նվիրված հատվածը: Նշված հարցի ուսումնասիրությանը հեղինակը երկրորդ գլխում առանձին ենթագլուխ է հատկացրել («Կայսերական Գերմա-

նիայի պատասխանատվությունը հայերի ցեղասպանության մեջ», էջ 136-164):

Ստեփանյանը նշում է, որ կայսերական Գերմանիայի հանցավոր դերակատարումը Հայոց ցեղասպանության մեջ ակնհայտ է և որ դրա մասին նշել են հայտնի պատմաբաններ, հրապարակախոսներ, գրողներ, դիվանագետներ, հասարակական գործիչներ: Սակայն, նշում է հեղինակը, դրան զուգահեռ գոյություն ունեն հրապարակումներ, ուր դեպքերի ընթացքն աղավաղված է ներկայացվում: Մասնավորապես նշվում է, որ գերմանական պատմագրության մեջ փորձեր էին կատարվում արդարացնել Հայոց ցեղասպանությունը և դրա մեղքը բարդել հայերի վրա: Սակայն այդ տեսակետը փաստերի հիման վրա ժխտել է Լայպցիգի համալսարանի Բալկանիստիկայի ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր Է. Վերները, որը 1973թ. հրապարակել էր «Հայկական սարսափները 1915-1916թթ. – հայկական հերյուրա՞նք» հոդվածը, ուր շարադրել էր իր մտքերը Հայոց ցեղասպանության իրական անցքերի վերաբերյալ: Իր հոդվածում Վերները քննադատության է ենթարկում նաև կայսերական Գերմանիայի ղեկավարությանը՝ հայերի ցեղասպանության մեջ երիտթուրքերին ցուցաբերած հանցավոր աջակցության համար:[66]

Հեղինակը վկայակոչում է Ա. Թոյնբիին, Հ. Ֆիրբյուխերին, Հ. Շտյուրմերին, որոնք խոսում են գերմանացիների մեղսակցության մասին, հիշատակվում է, որ 1916թ. ապրիլի 9-ին Սորբոնում Ֆրանսիայի երեսփոխանների պալատի նախագահ Պոլ Դեշանելն իր ճառում նույնպես մեղադրում էր գերմանացիներին: Հիշատակվում է նաև Հ. Մորգենթաուի համանման կարծիքը, ինչպես նաև Յ. Մարկվարտի մեղադրանքը գերմանական իշխող շրջանակների հանդեպ:

Հեղինակը բերում է շատ կարևոր մի փաստաթուղթ: Դա հայերի բնաջնջման ականատես գերմանացի մի երեսփոխանի դիմումն է ռայխստագին, ուր նա հայտարարում է, որ եթե Գերմանիան մնա լուռ և պասիվ դիտողի դերում, ապա նրան կմեղադրեն թուրքական իշխանությունների հետ հանցավոր պայմանավորվածության մեջ, և այդ խայտառակ էջը հավերժ կմնա Գերմանիայի պատմության մեջ: Ավելին, ըստ երեսփոխանի հայտարարության՝ գերմանացիները պարտավոր էին անմիջապես կասեցնել կենդանի մնացած կես միլիոն հայ քրիստոնյաների բնաջնջումը, քանի որ միայն Գերմանիան ուներ անհրաժեշտ ազդեցություն Թուրքիայի վրա:[67]

Ինչպես նշում է Ստ. Ստեփանյանը, Թուրքիայի գործելակերպը և իրենց վարած քաղաքականությունն արդարացնելու համար գերմանական դիվանագետները վկայակոչում էին ռազմական ժամանակների նկատառումները, իսկ որոշ դեպքերում միտումնավոր խեղաթյուրում էին փաստերը: Որպես օրինակ բերվում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին (1915թ. մայիսի 8-ին), ուր հայտնվում էր, թե իբր Վանում ապստամբած հայերը միացել էին ռուսներին և այդ պատճառով չէր կարելի մեղադրել թուրքական իշխանություններին:[68]

Կայսերական Գերմանիայի, նրա դիվանագետների և պաշտոնյաների մեղսակցության մասին է վկայում Ստեփանյանի կողմից մեջբերված գերմանական դեսպանի հետևյալ հայտարարությունը. «Արևելյան Անատոլիայի նահանգների հայերի հանդեպ կայսերական կառավարության անցկացրած ճնշող միջոցառումները թելադրված են ռազմական անհրա-

ժեշտությամբ և հանդիսանում են օրինական պաշտպանական միջոցներ: Գերմանական կառավարությունը հեռու է դրանց իրականացմանը խանգարելուց, քանի որ այդ միջոցառումները Թուրքիայի ներքին իրավիճակի ամրապնդումը և այլևայլ ապստամբությունների փորձերի կանխումն են հետապնդում: Այդ կապակցությամբ գերմանական կառավարության տեսակետը լիովին համընկնում է այն մեկնաբանությունների հետ, որոնք տրվել են Դռան կողմից...»:[69]

Հեղինակը նշում է, որ հայերին պաշտպանելու համար թուրքական իշխանությունների վրա ճնշում իրագործելու պահանջներին ի պատասխան Գերմանիայի պետական քարտուղար Ցիմերմանը հայտարարեց, որ գերմանական կառավարության հնարավորություններն այդ հարցում սահմանափակ են և քանի որ թուրքերը նրանց դաշնակիցներն են, ապա եթե գերմանացիների կոչերը ոչ մի ազդեցություն չունենան, ապա իրենց կմնա միայն խզել դաշինքը, իսկ դա գերմանական իշխանություններն անել չեն կարող:[70] Իրոք՝ Գերմանիան ոչ միայն չբողոքեց թուրքական իշխանությունների վայրագությունների դեմ, այլ պաշտոնապես հավանություն տվեց դրանց: Դրա մասին է վկայում 1915թ. հունիսի 4-ին Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանատան հուշագիրն՝ ուղղված Մեծ վեզիրին: Բացի այդ Ստեփանյանը հիշատակում է Հալեպի գերմանական հյուպատոս Հոֆմանի զեկուցագիրը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանատանը (18 հոկտեմբերի 1915թ.), ուր նշվում է. «Գերմանիայի համաձայնությունը զանգվածային այս կոտորածին հայտնի է դարձել... ոչ միայն բոլոր քրիստոնյաներին, այլև... երկրի մահմեդական բնակչությանը»:[71]

Ի տարբերություն Թուրքիայում գործող գերմանական դիվանագետների՝ հայերի ճակատագրի հանդեպ անտարբերության, իսկ որոշ դեպքում էլ հայկական կոտորածներին նրանց աջակցության, կային բացառություններ: Ստեփանյանը, մասնավորապես, նշում է Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանի ժամանակավոր պաշտոնակատարը կոմս Մետտերնիխի մասին, որի գործունեությունը առաջացնում էր գերմանական իշխող օղակների դժգոհությունը: Այդ մասին է վկայում Գերմանիայի արտաքին գործերի նախարար ֆոն Յագովի հայտարարությունը ռայխստագում. «Դուք պետք է հասկանաք,- ասում էր նա,- որ այդպիսի որոշման մենք չենք կարող գնալ: Ինչքան էլ... մենք սգանք հայերի ճակատագրի համար, մեզ համար ավելի թանկ են մեր զավակները և եղբայրները, որոնք ծանր մարտերում իրենց թանկարժեք արյունն են հեղում, իսկ թուրքերի աջակցությունը մեզ համար ավելի անհրաժեշտ է, քան հայերինը... Դուք պետք է համաձայնեք, որ մենք չենք կարող շատ հեռու գնալ և դենոնսացիայի ենթարկել մեր դաշինքը թուրքերի հետ, որոնց դժգոհությունը մենք արդեն հարուցել ենք՝ Հայկական հարցի վերաբերյալ մեր մշտական բողոքներով»:[72]

Ստեփանյանը գերմանական դիվանագետներից մարդասիրության և օբյեկտիվության իր կեցվածքով առանձնացնում է նաև Հալեպի հյուպատոս Ռյոսլերին, ավելացնելով, որ Թուրքիայում կային նաև այլ գերմանացիներ, որոնք Հայկական հարցում կանգնած էին մարդասիրության և ճշմարտության դիրքերին: Սակայն նրանք փոքրամասնություն էին կազմում, այնինչ պաշտոնական Գերմանիան խրախուսում էր հայերի ոչնչացումը:

1976թ. հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությանը նվիրված մենագրությամբ հանդես եկավ Ծ. Աղայանը[73], ուր անդրադարձ է կատարվել նաև Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության մեջ կայսերական Գերմանիայի խաղացած դերին:

Վեցերորդ գլխի երկրորդ ենթագլխում («Կոտորածների հրահրումը», էջ 331-355) հեղինակն ընդհանուր ակնարկ է կատարում 1913-1914թթ. հայկական բարեփոխումների վերաբերյալ ծավալված բուռն քննարկումների մասին և անդրադառնում այդ հարցի շուրջ մեծ տերությունների վարած քաղաքականությանը: Ի թիվս այլոց, նա ներկայացնում է կայսերական Գերմանիայի երկդիմի գործելակերպը, այն, որ Գերմանիան երկերեսանի քաղաքականություն էր վարում և ամեն կերպ աշխատում խոչընդոտել բարենորոգումների իրականացմանը:

Ութերորդ գլխի առաջին ենթագլխում («Երիտթուրքերի ցեղասպանության ծրագիրը», էջ 454-460) Աղայանը ներկայացնում է երիտթուրքերի կողմից Հայկական հարցի վերջնական լուծման ծրագրի հղացման պատմությունը: Գալով Գերմանիայի մեղսակցության հարցին նշվում է երիտթուրքերի ցանկությունը՝ Արևելյան հարցը և նրա մաս կազմող Հայկական հարցը կոտորածի միջոցով լուծելու մասին: Այդ գործն իրականացնելուն պետք է նպաստեր «սրբազան պատերազմը», որը նախապատրաստվում էր Գերմանիայի խորհրդով ու հովանավորությամբ և որի արդյունքն եղավ քրիստոնյաների, հատկապես հայերի կոտորածը:

Այն ժամանակ, երբ երիտթուրքերը զանգվածաբար ոչնչացնում էին Օսմանյան կայսրության հայ բնակչությանը, գերմանական մամուլը (օրինակ, «Deutsche Tageszeitung» թերթը) ջանում էր արդարացնել նրանց հայասպան քաղաքականությունն, իսկ հայերի մասին տարածում էր կեղծ մեղադրանքներ: Գերմանական մամուլում արգելված էր հայկական արհավիրքների մասին ճշմարիտ տեղեկություններ հաղորդել, այն դեպքում, երբ թուրքական կողմի ճչացող կեղծիքներն առատորեն հրամցվում էին շարքային գերմանացուն:[74]

Հաջորդ ենթագլխում («Զանգվածային ջարդեր», էջ 460-500) ներկայացվում են արևմտահայությանը բաժին հասած արհավիրքները և նշվում, որ հավաստի փաստերով ապացուցված է հայերի հանդեպ գործադրվող հալածանքների ծրագրի՝ գերմանական քաղաքացիական և զինվորական իշխանությունների մասնակցությամբ կազմված և իրագործված լինելու մասին: Մասնավորապես, 1915թ. հունվարի 20-ին, երբ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հայտնում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմին, որ պատերազմը ամենահարմար պահն է ընձեռում հայկական խնդիրը վերացնելու համար և խնդրում է գերմանական կառավարությանը՝ չխոչընդոտել թուրքերին այդ հարցում, Վանգենհայմը այդ առիթով հեռագրում է Բեռլին, որ չպետք է արգելք հանդիսանալ թուրքերին:[75] Աղայանը նշում է, որ գերմանական կողմն ավելի էր բորբոքում թուրքական ցեղամոլությունը հայերի հանդեպ և բերում մի քանի օրինակ: Երբ Ուրֆայի հայերը համառ դիմադրություն էին ցուցաբերում թուրք ջարդարարներին և չէին հանձնվում, գերմանացի մի սպա խոսք տվեց նրանց, որ հանձնվելու դեպքում իրենց ոչ մի վտանգ չի սպառնա: Հայերը վստահեցին նրան, բայց շատ թանկ վճարեցին իրենց դյուրահավատության համար. գերմանացի սպան հանձնված հայերի մի մասին շղթայակապ բանտ ուղարկեց, իսկ մյուս մասին՝ քաղաքից դուրս տարավ և ոչնչացրեց:[76]

Նույն գլխի երրորդ ենթագլխում («Եղեռնը համաշխարհային հասարակության դատաստանի առջև», էջ 500-521) ներկայացվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային հասարակության արձագանքները, մասնավորապես Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ մի քանի օրինակներ:

1982թ. հրատարակվեց Ջ. Կիրակոսյանի «Младотурки перед судом истории» գիրքը:[77]

Իր գրքի երկրորդ գլխում («Եվրոպական դիվանագիտությունը և հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թվականներին», էջ 44-70) խոսելով կայսերական Գերմանիայի դիրքորոշման մասին, Կիրակոսյանը նշում է, որ այն հանդիսանում էր Օսմանյան կայսրության հիմնական աջակիցը: Գերմանիան 19-րդ դարի 80-ական թվականներից իր ազդեցությունը տարածեց Թուրքիայի վրա: Հայկական կոտորածների ժամանակ գերմանական կայսրը, կանցլեր Հոհենլոեն և արտաքին գործերի պետական քարտուղար Մարշալը փարիսեաբար ողբում էին հայ քրիստոնյաների ջարդը, սակայն գործնականում աջակցում էին թուրք ջարդարարներին: Իսկ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Զաուրման այնքան բուռն էր պաշտպանում Աբդուլ Համիդին, որ վերջինս 1896թ. սեպտեմբերին՝ հայկական ջարդերի ժամանակ, դիմում էր նրան խորհրդով այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեին Հայկական հարցում:[78]

Կիրակոսյանը նշում է նաև, որ Գերմանիայում կային անհատներ, որոնք դեմ էին կառավարության գործելակերպին և իրենց ուժերի ներածին չափով աշխատում էին օգնել Թուրքիայի հայերին: Դրանցից էին Յոհաննես Լեփսիուսը և դոկտոր Լոխմանը, որոնք 1895թ. Գերմանիայում հիմնադրեցին երկու միություն և աշխատանքներ ծավալեցին՝ թուրքահայերի օգտին հանգանակություններ կազմակերպելու, Գերմանիայի հասարակության լայն շրջաններին Թուրքիայում բնակվող հայերի ծանր վիճակի մասին տեղեկացնելու ուղղությամբ:[79]

Վեցերորդ գլխում («Երիտթուրքերը և հայ ժողովրդի ցեղասպանությունը Թուրքիայում», էջ 174-222), խոսելով Հայոց ցեղասպանության մեջ կայսերական Գերմանիայի ունեցած դերակատարման մասին, հեղինակը հայտարարում է, որ այն Օսմանյան կայսրության դաշնակիցն ու հակահայկական քաղաքականության գլխավոր ոգեշնչողներից էր:[80] 1914թ. դոկտոր Զավրիևի հետ ունեցած հանդիպման ժամանակ Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավար Ցիմերմանը Հայկական հարցի և հայերի վերաբերյալ, մասնավորապես, նշում էր, որ Գերմանիան անհնարին է համարում թուրքերի և հայերի հաշտեցումը: Օսմանյան կայսրությանը սպառնացող վտանգը հաշվի առնելով, ասում էր Ցիմերմանը, Գերմանիան պետք է հայերին լիովին հանձներ թուրքերի սրամադրությանը, քանի որ հայերն ընդգծված ռուսամետ տրամադրություններ ունեն. Գերմանիան պետք է սատարեր երիտթուրքերի հակահայկական գործողությունները: Այն երբեք չէր կարողանա հանգիստ տիրել Կիլիկիային և Միջագետքին, քանի դեռ Ռուսաստանը ցանկանում էր գրավել Հայաստանը, քանզի, ով տիրապետում էր Հայաստանին, տիրապետում էր Կիլիկիային և Միջագետքին:[81]

Կիրակոսյանը նշում է, որ կայսերական Գերմանիան կանխատեսում էր Օսմանյան կայսրության փլուզումը և ցանկանում հնարավորինս շատ շահել դրանից: Ուստի Գերմանիան չէր ցանկանում գնալ լուրջ բարե-

փոխումների Արևմտյան Հայաստանում, բայց և չէր ցանկանում հայերին վանել իրենից: Հեղինակը հիշատակում է 1913թ. վերջերին Պաուլ Ռոհրբախի արված հայտարարությունն առ այն, որ բարեփոխումները Թուրքահայաստանում հակասում էին Գերմանիայի շահերին Արևելքում, դրա համար Գերմանիայի խնդիրն էր, ըստ նրա, այդ բարեփոխումների խափանումը:[82]

Ըստ հեղինակի, փաստերը ցույց են տալիս, որ հայերի տեղահանման որոշումը համաձայնեցված էր կայսերական Գերմանիայի կառավարության հետ, և դա արվում էր Լիման ֆոն Սանդերսի և դեսպան Վանգենհայմի միջոցով:

Սակայն կային նաև այնպիսի գերմանացիներ, որոնք մերկացնում և դատապարտում էին հայերի հանդեպ կատարվող վայրագությունները և դրանց հանդեպ գերմանական իշխանությունների դիրքորոշումը:

Գերմանական իշխանություններն ամեն կերպ թաքցնում էին իրականությունն, իսկ գերմանական մամուլը խեղաթյուրում էր այն և արդարացնում երիտթուրքերի գործելակերպը:

Ինչպես նշում է հեղինակը, փորձեր էին արվում գերմանական քաղաքականությունը կապել Թուրքիայում գործող գերմանական դեսպանների հետ, այն է, որ նրանք որոշակիորեն ազդում էին հայերի հանդեպ Գերմանիայի մոտեցման վրա: Սակայն Կիրակոսյանը նշում է, որ փոխվում էին դեսպանները, բայց անփոփոխ էր մնում Գերմանիայի թուրքամետ դիրքորոշումը և նրա հակահայկական ու հակառուսական քաղաքականությունը:[83]

Հիշատակվում է գերմանացի լրագրող Հ. Շտյուրմերն, որը դեպքերի ականատեսն էր և հայտարարում էր, որ կայսերական Գերմանիան հավասարապես պատասխանատու է հայկական կոտորածների համար:[84] Բերվում են նաև ֆրանսիացի Ռընե Պինոնի խոսքերն, որտեղ նա նշում է, որ հայերի բնաջնջումը քաղաքականապես ձեռնտու էր գերմանացիներին, քանի որ վերջիններս ցանկանում էին Թուրքիան հետագայում գերմանական գաղութ դարձնել:

Տվյալ հարցի լուսաբանումը Կիրակոսյանն ավարտում է՝ համերաշխություն հայտնելով ակադեմիկոս Ե. Տառլեի հետևյալ եզրակացությանը, որ բավական էր գերմանական իշխանությունների գեթ մեկ խոսքը, որպեսզի կանգնեցվեին ջարդերի երկու ղեկավարները՝ Թալեաթ և Էնվեր փաշաները:[85]

Հայոց ցեղասպանության մեջ կայսերական Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ Ռուբեն Սահակյանի գրքում[86] արտահայտած մտքերը որոշ առումով առանձնանում են խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված կարծիքից:

Երկրորդ գլխի («Հոդված-հրապարակումներ», էջ 32-124) «Նոր փաստաթղթեր 1915թ. Եղեռնում կայսերական Գերմանիայի դերի մասին» հատվածում (էջ 32-104), ուր հեղինակը վերլուծության առարկա է դարձնում կանադացի հեղինակ Ուլրիխ Տրումպեների «Գերմանիան և Օսմանյան կայսրությունը 1914-1918թթ.» գրքի «Հայկական հալածանքները» գլուխը, կարելի է հանդիպել հեղինակի հետևյալ մտքին. «Հիրավի, արտասահմանյան, ինչպես և խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում գործն այնպես է ներկայացվում, թե իբր գերմանական իմպերիալիզմի ջատագովներն են հղացել, մշակել և եռանդուն կերպով հրահրել հայերի իսպառ ոչնչացման ծրագիրը, և որ երիտթուրքական կառավարու-

թյունը, իբր, կարող էր չկիրառել այդ քաղաքականությունը, որ իբր Գերմանիան ուզում էր, որ հայ ազգը գլխովին բնաջնջվի և այլն: Նման պնդումները մնում են որպես անհիմն ենթադրություններ, մինչդեռ պատմական գրականության մեջ արդեն բացահայտված են հայկական եղեռնի բուն դրդապատճառները, հաստատված, որ հայասպան ծրագրերին երիտթուրքերը հետամուտ էին տակավին 1911-12 թվականներից, միայն հարմար առիթի էին սպասում՝ այն լայն մասշտաբներով ու արագ իրականացնելու համար: Եվ այդ առիթը Առաջին համաշխարհային պատերազմն էր: Այստեղ կարևոր չէ, թե 1913 թվին Պաուլ Ռոհրբախի հայտնած միտքը՝ հայերի տեղահանության նպատակահարմարության մասին ի՞նչ դեր խաղաց երիտթուքերի հայաջինջ ծրագրերում... Ուրիշ խնդիր է, որ կայսերական Գերմանիան (ինչպես և Ավստրո-Հունգարիան), որպես Թուրքիայի դաշնակից, պատասխանատու է այն բանի համար, որ ելնելով իր շահադիտական նպատակներից, նա, ըստ էության, նպաստել է երիտթուրքերի հանցավոր քաղաքականության իրականացմանը, ուրեմն և մեղսակից է հայկական եղեռնին»:[87] Իհարկե, հայտարարել, որ մեղքը լիովին ընկնում է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի և նրանց ներկայացուցիչների վրա անհիմն և լիովին սխալ կլիներ: Սակայն հեղինակի վերը նշված գնահատականն էլ, թերևս երկմտանքի առիթ է տալիս:

Նույն գլխի «1915 թվական: Սարսափների տարի» հատվածում հեղինակը գրում է. «Հակառակ ժամանակակից առանձին հեղինակների պնդման, օսմանյան հայերի հետապնդումը պատերազմի տարիներին ոչ հրահրվել, և ոչ էլ հավանության է արժանացել գերմանական կառավարության կողմից: Սակայն, անշուշտ, կան ուրիշ ծանրակշիռ փաստարկներ, որոնք կարող են առաջ քաշվել ինչպես նրա, այնպես էլ ավստրո-հունգարական կառավարության դեմ: Կենտրոնական զույգ տերությունների պետական գործիչները և նրանց մի քանի ներկայացուցիչները Կոստանդնուպոլսում մեղավոր էին երևույթների իրենց թյուր մեկնաբանման ու բարոյական անգթության համար և այն բանում, որ չափազանց մեծ անհանգստություն էին հանդես բերում այն ամենի նկատմամբ, ինչը քաղաքական տեսակետից շահավետ էր ներկա պահին կամ կարող էր այդպիսին լինել ապագայում:

Չնայած համոզիչ ապացույցներին, նրանք համաձայնեցին Բարձր Դռան կեղծ մեղադրանքներին, որ իբր վերջինիս հակահայկական քաղաքականությունը թելադրվում էր արևելյան նահանգներում հավանորեն տարածված խռովությունների առկայությամբ: Ավելին, նույնիսկ այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ թուրքական «անվտանգության միջոցառումները», ներառյալ ամբողջ նահանգների դաժան տեղահանությունը, մասն են կազմում կանխամտածված այն ջանքերի, որոնց նպատակն է ցրել և ոչնչացնել Փոքր Ասիայի հայ ազգաբնակչությունը, գերմանական և ավստրո-հունգարական կառավարությունները վճռականորեն հրաժարվեցին այդ ուղղությամբ որևէ գործնական քայլ անելու»:[88]

Ամփոփելով այս գլխուխը՝ հեղինակը գրում է. «...պարզ է, որ գերմանական կառավարությունը ոչ հրահրել է, և ոչ էլ հավանություն է տվել հայկական հալածանքներին Օսմանյան կայսրությունում, թեև նա չի առարկել կանոնավոր և ռազմական տեսանկյունից անհրաժեշտ տեղափոխումների դեմ: Ավելին, քաղաքական նպատակահարմարության նկատառումներով Բեռլինի (ինչպես նաև Վիեննայի) պետական գործիչները

հետևողականորեն հրաժարվել են հորդորանքներից և դիվանագիտական բողոքներից այն կողմ անցնել՝ շեղելու համար Բարձր Դռանը իր վայրագ քաղաքականությունից»: Եվ նաև. «Հայերի ուղղակի հովանավորությունը Գերմանիայի ուժերից վեր էր, հակառակ երբեմն եղած պնդումների»:[89]

Բացի այդ հեղինակը գրում է. «Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեկավարների որոշումը՝ հայերի պատճառով ռիսկի չդիմել խզելու կապերը Բարձր Դռան հետ, անշուշտ պետք է դիտվի և դատվի կոնտեքստում: Զարդերը տեղի ունեցան պատերազմի կեսին: Օսմանյան Թուրքիայի հետագա մասնակցությունը պատերազմին զույգ կենտրոնական տերություններն էլ էական էին համարում: Ժամանակակից պատմությունը չի արձանագրում և ո՞չ մի օրինակ, որտեղ մարդասիրական նկատառումները հարկադրեին պատերազմող երկրին ձեռք քաշել իր դաշնակցի գործուն աջակցությունից՝ վերջինիս ներքին հանցագործությունների պատճառով»:[90]

Հարկ է նշել, որ չնայած խնդրո առարկայի վերաբերյալ հեղինակի կարծիքն որոշակիորեն չի համապատասխանում խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված տեսակետներին, Սահակյանը մեծ աշխատանք է կատարել՝ իր շարադրանքում օգտագործելով, մասնավորապես, Բոնների գերմանական արտաքին գործերի նախարարության արխիվի (German Foreign Office Archives Bonn) և Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարության արխիվի նյութերը (Austro-Hungarian Foreign Ministry Archives. Vienna), որոնց հիման վրա էլ նա աշխատել է անկանխակալ գնահատական տալ խնդրո առարկային:

Վերը շարադրվածից կարելի է հետևություն անել, որ խորհրդահայ պատմագրության մեջ կայսերական Գերմանիայի մեղսակցության մասին հիմնականում կարծիքների համերաշխություն է նկատվում: Հարկ է նկատել, որ այն ժամանակ հայ պատմաբաններին հիմնականում հասու չէին բուն գերմանական դիվանագիտական աղբյուրները, որոնք հնարավորություն են տալիս հարցի լուսաբանումը դարձնել ավելի բազմակողմանի: Հայ պատմաբանները հիմնականում օգտվում էին ռուսական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան աղբյուրներից, որտեղ որոշ չափով միակողմանի և չափազանցված էր ներկայացված կայսերական Գերմանիայի մեղսակցության հարցը, որը քարոզչության գործիք էր դարձել Գերմանիայի հակառակորդների ձեռքում: Ֆրանսիայի օրինակի վրա այդ լավագույնս ներկայացված է Ե. Գասպարյանի «Ֆրանսիան և Մեծ Եղեռնը» գրքում:[91]

Այսօր իրավիճակն արդեն փոխվել է: Վարդգես Միքաելյանի և Վոլֆգանգ Գուստի կողմից կազմված և հրատարակված գերմանական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները թույլ են տալիս նոր հայացք նետել ինչպես Հայոց ցեղասպանության վրա՝ ընդհանրապես, այնպես էլ դրանում կայսերական Գերմանիայի մեղսակցության հարցի վրա՝ մասնավորապես, որն ակնհայտ է, սակայն կարոտ է որոշ ճշտումների և հստակեցումների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Մնացականյան Ար. Գերմանա-թյուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում, Եր., Հայպետհրատ, 1948:
[2] Նշվ. աշխ., էջ 30:
[3] Նշվ. աշխ., էջ 43:

[4] Նշվ. աշխ., էջ 105:
[5] Նշվ. աշխ., էջ 137:
[6] Նշվ. աշխ, էջ 139:
[7] Նշվ. աշխ, էջ 149:
[8] Նշվ. աշխ, էջ 193:
[9] Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850-1870թթ.), Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1955:
[10] Նշվ. աշխ. էջ 339:
[11] Սարգսյան Ե. Ղ. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում», Եր., «Հայաստան», 1964:
[12] Նշվ. աշխ. էջ 136:
[13] Նշվ. աշխ. էջ 139:
[14] Նշվ. աշխ. էջ 265:
[15] Նշվ. աշխ. էջ 267:
[16] *Այս տեսակետը չի արտացոլում իրականությունը: Ինչպես նշում է Վ. Գուստը, գերմանական հյուպատոսներից միայն Տրապիզոնի հյուպատոս Հայնրիխ Բերգֆելդն էր հավանություն տալիս հայերի տեղահանությանը:* Տե՛ս Wolfgang Gust (Hg.), Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, 2005, S.78.
[17] Եսայան Ա. «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Եր., «Միտք», 1965:
[18] Նշվ. աշխ., էջ 85:
[19] Նշվ. աշխ., էջ 85-86:
[20] Նշվ. աշխ., էջ 90:
[21] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под. ред. проф. М.Нерсисяна. Ер., 1966.
[22] Նշվ. աշխ., էջ XII:
[23] Տե՛ս. օրինակ. փաստաթղթեր NN128. 129. 132. 152. 156. 166. 169. 172. 173. 174. 181, 185, 186, 188, 203, 208, 211, 218, 235, 244 և այլն:
[24] Аветян А. С. Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, М.: «Международные отношения», 1966.
[25] Նշվ. աշխ., էջ 35:
[26] Նշվ. աշխ., էջ 36:
[27] Նույն տեղում:
[28] Նշվ. աշխ., էջ 43-44:
[29] Նշվ. աշխ., էջ 44:
[30] Կիրակոսյան Ջ. Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916թթ., Եր., «Հայաստան», 1967:
[31] Նշվ. աշխ., էջ 158:
[32] Նշվ. աշխ., էջ 166:
[33] Նշվ. աշխ., էջ 172-173:
[34] Նշվ. աշխ., էջ 179:
[35] Նշվ. աշխ., էջ 278:
[36] Նշվ. աշխ., էջ 414:
[37] Նշվ. աշխ., էջ 415: Ջ. Կիրակոսյանը հղում է կատարում ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 41-ին: *Սակայն հայտնի է, որ Կոնստանդնուպոլիս իր այցելության ժամանակ Լեփսիուսը օգոստոսի 10-ին հանդիպել է ռազմական նախարար Էնվեր փաշայի և ոչ թե ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հետ:* (Տե՛ս օրինակ՝ Հայրունի Ա. Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Եր., 2002թ., էջ 255: Wolfgang Gust (Hg.), Der Völkermord an den

Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, 2005, S.105).

[38] Նշվ. աշխ., էջ 416:

[39] Նշվ. աշխ., էջ 419:

[40] Акопян С. М. Западная Армения в планах империалистических держав, Ер., 1967.

[41] Նշվ. աշխ., էջ 37:

[42] Նշվ. աշխ., էջ 40-41:

[43] Նշվ. աշխ.. էջ 41:

[44] Նշվ. աշխ., էջ 42:

[45] Նշվ. աշխ., էջ 59:

[46] Արզումանյան Մ. Հայաստան 1914-1917, Եր., «Հայաստան», 1969:

[47] Նշվ. աշխ., էջ 47:

[48] Նշվ. աշխ., էջ 49:

[49] Նշվ. աշխ., էջ 60:

[50] Նույն տեղում:

[51] Նշվ. աշխ., էջ 97:

[52] Նշվ. աշխ., էջ 145:

[53] Նշվ. աշխ., էջ 161:

[54] Նշվ. աշխ., էջ 300-301:

[55] Նշվ. աշխ., էջ 317:

[56] Նշվ. աշխ., էջ 334:

[57] Նշվ. աշխ., էջ 372:

[58] Նշվ. աշխ., էջ 416:

[59] Նշվ. աշխ., էջ 446:

[60] Նշվ. աշխ., էջ 450-451:

[61] Նշվ. աշխ., էջ 463:

[62] Նշվ. աշխ., էջ 515-516:

[63] Նշվ. աշխ., էջ 522:

[64] Նշվ. աշխ., էջ 525-526:

[65] Степанян С. Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века), Ер., «Айастан», 1975.

[66] Նշվ. աշխ., էջ 138-140:

[67] Նշվ. աշխ., էջ 143-144:

[68] Նշվ. աշխ., էջ 147:

[69] Նշվ. աշխ., էջ 150:

[70] Նույն տեղում:

[71] Նշվ. աշխ., էջ 153:

[72] Նշվ. աշխ., էջ 155:

[73] Աղայան Ծ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976:

[74] Նշվ. աշխ., էջ 457:

[75] Նշվ. աշխ., էջ 460:

[76] Նշվ. աշխ., էջ 477:

[77] Киракосян Дж. Младотурки перед судом истории, Ер., «Айастан», 1986.

[78] Նշվ. աշխ, էջ 58:

[79] Նշվ. աշխ, էջ 59:

[80] Նշվ. աշխ, էջ 194:

[81] Նշվ. աշխ, էջ 195:

[82] Նշվ. աշխ, էջ 196:

[83] Նշվ. աշխ, էջ 198:

[84] Նշվ. աշխ, էջ 199:

[85] Նշվ. աշխ, էջ 200:
[86] Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից, Եր., «Հայաստան», 1990:
[87] Նշվ. աշխ., էջ 35-36:
[88] Նշվ. աշխ., էջ 41:
[89] Նշվ. աշխ., էջ 103:
[90] Նշվ. աշխ., էջ 104:
[91] Գասպարյան Ե. Ֆրանսիան և Մեծ Եղեռնը (1915-1918թթ.), խմբ. Լ. Բարսեղյան, Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2000:

Резюме

Освещение вопроса ответственности кайзеровской Германии в Геноциде армян в армянской историографии советского периода.

Арам Мирзоян

В статье рассмотрен вопрос ответсвенности Германии в геноциде армян в Османской империи, отраженный в армянской историографии советского периода. Во всех трудах, в основном, признана соучастие кайзеровской Германии в трагедии армянского народа. В частности, это отрицательная оценка политике правительства кайзеровской Германии и её представителям в Турции.

Выражается мнение, что в советский период армянские историки в основновном опирались в своих трудах на данные исследований ученых стран Антанты и были лишены возможности пользоваться немецкой дипломатической перепиской времен Первой мировой войны. Также отмечается, что во время Первой мировой войны страны Антанты развернули антигерманскую кампанию, результатом чего явилось гипертрофированное представление фактов. Это привело к тому, что ряд взглядов, высказанных историками Советской Армении не полность отражают действительность и нуждаются в определенной коррекции.

Summary

The Elucidation of the Complicity of Imperial Germany in the Armenian Genocide in Armenian Historiography of the Soviet Period.

Aram Mirzoyan

In the article is examined the issue of complicity of Germany in the Armenian genocide in Ottoman Empire, mirrored in the Armenian historiography of the Soviet time. The complicity of Imperial Germany in the tragedy of the Armenian nation has been basically recognized in all works. In particular, there is the negative assessment of the policy of government of Imperial Germany and its representatives in Turkey.

An opinion is expressed that in Soviet period the Armenian historians relied in their researches mainly on the works of scientists and researchers of the Entente states. They had not possibility to use the German diplomatic correspondence from the period of the First World War. It is also pointed that during the First World War there was a strong campaign against Germany. As a result the facts were high-coloured. That is why some of the views in the Armenian historiography of the Soviet time regarding this subject need to be reconsidered.